

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Երևան – 2015

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

Պատասխանատու խմբագիրներ՝
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ա. Ե. Սարգսյան
բանասիր. գիտ. դոկտոր Ռ. Մ. Թոխմախյան

Գրախոս՝
պ.գ.թ. Ա. Ֆիշենկյան

Գիտական ուսումնասիրությունների սույն ժողովածուն նվիրված է Սիրիայի
համայնքում արևմտահայերենի արդի վիճակին: Քննվում են լեզվական խնդիրներ,
որոնք կարող են նպաստել հայերենի գրական երկու տարբերակների մերձեցմանը:

Գիրքը կարող է օգտակար լինել ինչպես արևելահայերենի և
արևմտահայերենի զուգադրական հարցերով զբաղվող մասնագետներին, այնպես էլ
ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.22

ISBN 978-9939-50-288-5

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2015

MINISTRY OF DIASPORA OF RA

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

CURRENT STATE OF WESTERN ARMENIAN
IN THE ARMENIAN COMMUNITY OF SIRIA

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ
ЗАПАДНОАРМЯНСКОГО
ЯЗЫКА В АРМЯНСКОЙ ОБШИНЕ СИРИИ

Yerevan 2015
Ереван 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն. Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում	5
2. Պատմական ակնարկ	10
3. Սիրիայի հայերենի հնչյունական համակարգը.....	17
4. Արևմտահայերենի որոշ իրողություններ	22
5. Հատուկ անունների գրության անմիօրինակության հարցերը արևմտահայերենում	24
6. Գոյականի հոլովական և բայի խոնարհման համակարգերը արևմտահայերենի գրավոր և բանավոր խոսքում (ըստ սիրիահայերի վկայությունների)	36
7. Արևմտահայերենի խնդիրները Սուրիոյ մեջ	54
8. Օգտագործված գրականություն	63

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ¹

Արդի լեզվաքաղաքականության, ինչպես նաև հայերենագիտության առաջնահերթ խնդիրներից է արևմտահայերենի պահպանության, ուսումնասիրության և զարգացման հարցը: Լինելով իր բնօրրանից զրկված և աշխարհով մեկ սփռված հայության տարբեր զանգվածների ընդհանուր հաղորդակցման լեզուն՝ արևմտահայերենը զրկված է միասնական գործառության ու զարգացման, կանոնարկման հնարավորություններից, ենթակա է այլ լեզուների տարաբնույթ ազդեցությունների և ստիպված է դիմակայել բազում մարտահրավերների, միաժամանակ նոր սերնդի շարքերում հայախոսների թվի շարունակական նվազումը վտանգ է ներկայացնում ոչ միայն լեզվապահպանական, այլ նաև հայապահպանական առումներով: Մերօրյա արևմտահայերենի մասին ահա թե ինչ է գրում Ռ. Տեր-Մերկերյանը. «Արևմտահայ տարբերակով բոլոր հաղորդակցվողները երկլեզվանի են, և նրանց համար առաջին լեզուն ընդունող երկրի լեզուն է, որը ժամանակի ընթացքում իր ազդեցությունն է թողնում. դա առաջին հերթին ակնհայտ է հատկապես արտասանության մեջ (չնայած բառապաշարի վրա նույնպես այդ ազդեցությունը շոշափելի է): Այսպես, այսօրվա դրությամբ կարելի է գանազանել հունահային ամերիկահայից, ֆրանսահային պոլսահայից, արգենտինահային լիբանանոհայից: Հեռու չէ այն ժամանակը, երբ կգանազանենք նաև ֆրանսահայերենը պոլսահայերենից, ամերիկահայերենը հունահայերենից, լիբանանահայերենը իսպանահայերենից»²: Այս իրողությունը նկատի ունենալով՝ ՀՀ Սփյուռքի նախարարության առաջարկով և ԳԱԱ նախագահության աջակցությամբ 2013թ. ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի

¹ Լեզվական բոլոր իրողությունները, որ ներկայացվում են սույն ուսումնասիրության մեջ, ընդհանուր են նաև մերձավոր արևելյան տարածաշրջանում ապրող արևմտահայության լեզվին՝ բացառյալ բարբառներն ու խոսվածքները:

² **Ռոբերտ Տեր-Մերկերյան**, *Արդի հայերենի երկու տարբերակների փոխներգործության շրջանակները*, Պատմաբանասիրական հանդես, Ե., 2001, N 1, էջ 91:

ինստիտուտում ձևավորեց արևմտահայերենի բաժին, որն իր առջև խնդիր է դրել ձեռնարկել Սփյուռքի լեզվավիճակի համալիր ուսումնասիրություն ու վերլուծություն, նպաստել գրական արևմտահայերենի կանոնարկմանը, ստեղծել արևմտահայերենի ամբողջական բառարան և ակադեմիական քերականություն, կատարել գրական լեզվի երկու ճյուղերի տերմինաբանության և ուղղագրության հարցերի գիտական կանոնարկում, արևելահայերենի և արևմտահայերենի փոխադարձ հարստացման ուղիների մշակում, նաև իր նպաստը բերել սփյուռքի հետ գիտակրթական կապերի ամրապնդմանը: Առաջադրված խնդիրները լուծելու համար լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինը համագործակցություն է ծավալում ինչպես ՀՀ Սփյուռքի նախարարության, վերջինիս ջանքերով երևանյան բուհերում ստեղծված՝ արևմտահայերենի ուսումնասիրության կենտրոնների, այնպես էլ արտերկրի հայագիտական կենտրոնների ու հայերենագետների հետ:

Այս համատեքստում լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինը ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրով տրամադրված ֆինանսական աջակցությամբ նախաձեռնել է Սիրիայի հայ համայնքում արևմտահայերենի արդի վիճակի ուսումնասիրությունը: Այդպիսով սկզբնավորվել է սփյուռքի լեզվավիճակի համալիր ուսումնասիրության գործընթացը, ընդ որում՝ նախ և առաջ Սիրիայի հայության լեզվի ուսումնասիրությունը պայմանավորված է և՛ վերջին շրջանում բարեկամ այդ երկրին ու նաև սիրիահայությանը պատուհասած ողբերգական իրադարձություններով, և՛ այն բանի հաշվառումով, որ սիրիահայությունը Սփյուռքի ամենահին համայնքներից է և համարվում է Սփյուռքի մայր գաղութ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հայ-սիրիական հարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն: Հայերը հոծ զանգվածներով այսօրվա Սիրիայի տարածք են եկել Հայաստանում արաբների տիրապետության ժամանակներից սկսած: Մինչև 1915 թվականը Սիրիայում կային բազում բնակավայրեր, որոնցում հայերն ապրում էին դարեր ի վեր: Ըստ Սիմեոն Լեհացու՝ 1616 թվին Հալեպում կար 300 տուն հայ, իսկ ըստ Հ. Թոփուզյանի՝ 1870-ական թվականներին Սիրիայում ապրում էին 81 283 քրիստոնյա հայեր, ընդ որում՝

նրանք հիմնականում հաստատված էին Հալեպի սանջակում: Հալեպի հայությունը իր ծագմամբ միատարր չէր. հնօրյա հայերեն ձեռագրերն ու հիշատակարանները վկայում են, որ հալեպահայ համայնքը ձևավորվել է Ջուղայից, Երևանից, Արցախից, Էրզրումից, Երզնկայից, Բաղեշից, Սեբաստիայից, Ուրֆայից, Մալաթիայից, Մասունից, Արաբկիրից և այլ վայրերից եկած տարբեր զբաղմունքի տեր մարդկանցով: Միրիայի արաբ ժողովուրդը բարյացակամորեն ապաստան տվեց նաև եղեռնից մազապուրծ եղած հայության զանգվածներին: Միրիական տարբեր քաղաքներում և հատկապես Հալեպում, այսպիսով, տարբեր ժամանակներում և տարբեր վայրերից եկած հայերը զուգորդում էին տարբեր մշակույթներ ու բարբառներ, այդ ամենին ավելանում էր նաև արաբական մշակույթի և արաբերենի ազդեցությունը: Հայերը, բնականաբար, յուրացնում էին արաբերենը, սակայն այս կամ այն չափով պահպանում էին նաև մայրենին: Դեռևս 1868թ. Հալեպ այցելած հայ մտավորականը գրել է, որ «հասարակաց լեզուն» արաբերենն է, բայց հայերը գիտեն հայերեն խոսել: Նկատվել է, որ Հալեպի խոսակցական հայերենում շատ մեծ քանակություն էին կազմում արաբական փոխառությունները: Սակայն հալեպահայերը այժմ էին ընկնում ազգային արժանապատվության և ինքնության գնահատման բարձր գիտակցությամբ և հետևողականորեն բարելավում էին հայերենի իմացության վիճակը: Այդ հարցում հատկապես մեծ նշանակություն է ունենում սիրիահայ դպրոցը, որը 1920-ականներից սկսած շատ արագ՝ մոտ երկու տասնամյակում, կարողանում է գրական արևմտահայերենը հայ հասարակության բոլոր շերտերի համար դարձնել հասարակական, ընդհանուր լեզու: Մի փոքր այլ էր իրավիճակը գյուղական բնակավայրերում, որոնցում հաճախ համախումբ ապրում էին նույն ծագումն ունեցող հայեր՝ պահպանելով իրենց մայրենի բարբառները: Հ. Աճառյանը Անտիոքի շրջանի հայաբնակ գյուղերի խոսակցական լեզուն անվանել է **Սուրիոյ բարբառ**, իսկ Ա. Ղարիբյանը առանձնացրել է Սվեդիայի, Քեսապի և Բեյլանի բարբառները:

Միրիայում իրավիճակի կայունացումից և խաղաղության հաստատումից հետո միայն հնարավոր կլինի գնահատել հայության ժողովրդագրական և լեզվական ճշգրիտ վիճակը ներկայում, սակայն Հայաստանում հանգրվանած սիրիահայերի հետ հանդիպումները, նրանց շրջանում կատարված հարցումները, բանավոր խոսքի

գրանցումները որոշակի նյութ են տալիս՝ կատարելու Սիրիայի հայ համայնքում արևմտահայերենի արդի վիճակի ուսումնասիրություն, վեր հանելու մեր ժողովրդի այդ հատվածի լեզվական որոշ առանձնահատկություններ:

ԳԱԱ լեզվի ինստիտուտի հետազոտողների խումբը (բ.գ.դ. Ռ. Թոխամալյան, բ.գ.թ. Պ. Վարդապետյան, բ.գ.թ. Ս. Տիոյան, բ.գ.թ. Տ. Սաֆարյան, Ա. Քարտաշյան և սիրիահայ գործընկերներ Հ. Մարաշլյան, Բ. Փանոսյան, Ա. Ֆիշենկյան) դիտարկում է սիրիահայության լեզվի ինչպես հնչյունական կազմին, այնպես էլ ձևաբանությանն ու բառապաշարին վերաբերող հարցեր: Հնչյունաբանության ոլորտում փորձառական ուսումնասիրության են ենթարկվել և՛ ձայնավորական, և՛ բաղաձայնական համակարգերի որոշ իրողություններ: Այսպես, ձայնաբանական ուսումնասիրության է ենթարկվել վերջերս որոշ ուսումնասիրողների կողմից արևմտահայերենում իբրև **ի** կապակցության զարգացում արձանագրվող քմայնացած **ու** հնչյունը: Սիրիահայ լեզվակիրների արտասանվածքի ձայնաբանական վերլուծությամբ պարզվել է, որ նրանց խոսքում **յու** կապակցությունն ունի յուրահատուկ ֆիզիկական արտահայտություն, որտեղ քմայնության հատկանիշը չի ծավալվում **ու** ձայնավորի ողջ սպեկտրապատկերում, ինչը թույլ չի տալիս տվյալ դեպքում խոսել **ու**-ի քմայնացման մասին: Բաղաձայնական համակարգում լեզվակիրները նշում են **ր-ռ** հակադրության բացակայությունը: Իսկապես, այս հնչյուններից մեկի կամ մյուսի արտասանությունը իմաստային փոփոխության չի հանգեցնում: Սակայն կան դեպքեր, երբ որպես կանոն հնչում է դրանցից մեկը (օրինակ՝ **ն**-ից առաջ որպես կանոն արտասանվում է **ռ**): Սիրիահայերի (հատկապես նոր սերնդի) խոսքում առանձին դեպքերում նկատվում է նաև հպական ու հպաշփական բաղաձայնների եռաստիճան շարքի դրսևորում, ինչը պետք է համարել արևելահայերենի ազդեցության արդյունք:

Ի հայտ են բերվել որոշ յուրահատկություններ ձևաբանական համակարգում: Այսպես, ուսումնասիրողները նկատել են, որ արևմտահայերենում ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է երեք եղանակով (սեռական հոլովով և մեջ կապով, հայցականի ձևով, տրականով): Սիրիահայերի խոսքում ներգոյականի իմաստն արտահայտելու ևս մեկ եղանակ կա՝ բացառական հոլովով և **ներս** կապով (Աշակերտները **դպրոցեն ներս** կազմակերպեցին աշնանային հանդես):

Հետաքրքրական է, որ եթե նախկինում (մոտ երեսուն տարի առաջ) իրար հաջորդող երկու սեռականների հոդառությունը սովորական էր (անցեալին մշուշին մեջէն), ապա ներկայումս առաջին սեռականի առանց հոդ կիրառությունն է ավելի սովորական (մայրիկի դէմքին վրա): Միրիահայ խոսքում նկատելի է նաև հոլովական զուգաձևությունների առատությունը (հոգիի/հոգւոյն, պատիւի/պատուի/պատուոյ, տարիի/տարւոյն/տարուան, շունի/շան, ծովի/ծովու, քաջութիւնով/քաջութեամբ, հօրմով/հայրով, սուգի/սգոյ, անունի/անուան և այլն): Բայական համակարգում նկատելի են երբեմն **է** և **ի** լծորդությունների մի քանի բայերի սխալ գործածության ձևեր՝ **ա** լծորդությամբ, ինչպես՝ ելլալ (փխն. ելլել), հեծնալ (փխն. հեծնել), մտնալ (փխն. մտնել), երեւալ (փխն. երեւիլ), թուալ (փխն. թուիլ) և այլն:

Միրիահայ խոսակցական հայերենում զգալի թիվ են կազմում արաբերեն բառերն ու արտահայտությունները: Ընդ որում՝ բացի հայերենի այլ բարբառներում ևս հանդիպող գրեթե ընդհանուր բնույթ ունեցող փոխառություններից, այստեղ առկա է նաև մասնավոր բնույթ ունեցող զգալի մի բառաշերտ:

Այս կարգի ուսումնասիրությունները զուտ լեզվաբանական հետաքրքրություն ներկայացնելուց զատ՝ կարող են վեր հանել նաև արևմտահայերենի զարգացման միտումները տարբեր միջավայրերում, նախանշել գրական արևմտահայերենի կանոնարկման հնարավորություններն ու եղանակները, արևելահայերենի և արևմտահայերենի՝ իբրև մեկ լեզվական ամբողջության միասնական զարգացման ուղիներն ու հեռանկարները:

Տաթևիկ Սաֆարյան
Արևմտահայերենի բաժնի
գիտաշխատող, Բ.Գ.Թ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սիրիայի համարյա ամբողջ տարածքում մինչև մ.թ. 7-րդ դարը բուն Ասորիքն էր: Բավականին խոսուն են հայերի և ասորիների հարաբերությունները, որոնք արդիական շատ շերտեր են բերել:

Հետագայում Ասորիքը ողողվեց արամեական ցեղերով, որոնք սեմական-հրեական ընտանիքին էին պատկանում, և երկիրն ամբողջությամբ ընկավ նրանց լծի տակ: Երկար դարերի տիրակալության արդյունքը այն եղավ, որ բնակչության լեզուն դարձավ արամեերենը: Մ.թ.ա. 9-րդ դարի սկզբին երկիրն անցավ Ասորեստանի տիրակալության տակ, իսկ 9-րդ դարի վերջերից մինչև մ.թ.ա. 8-րդ դարի առաջին կեսը ենթարկվեց Ուրարտուի կամ Արարատյան թագավորությանը:

Ասորիքն այնուհետև անցնում է Բաբելոնի թագավորության, հետո՝ Աքեմենյանների և Մեդկյանների իշխանության տակ: Ունենալով հարևան Հայաստանի պատմական ճակատագիրը՝ այս երկիրն ու ժողովուրդը ևս ռազմաքաղաքական հալածանքներից ավելի ենթարկվում է հոգևոր-մշակութային ճնշումների, որոնք ավելի շատ են աղավաղում ազգային նկարագիրը:

Այս իրավիճակում է, որ մ.թ.ա. առաջին դարում, Մեդկյանների գերիշխանությունից հիասթափված, Ասորիքի ավագանին ընդունում է Հայաստանի գերիշխանությունը, երկրի զգալի մասն անցնում է Տիգրան Մեծի ենթակայության տակ: Հայկական գերիշխանությունը տևում է մոտ 20 տարի (մ.թ.ա. 84-66 թթ.), և այդ շրջանում շատ հայեր են տեղափոխվում Ասորիք: Ասորիքը դառնում է հայկական փոխարքայություն՝ հայ զորավար Բագարատի գլխավորությամբ: Բայց շուտով այն անջատվում է Հայաստանից և վերածվում հռոմեական նահանգի, իսկ մ.թ. առաջինից 4-րդ դարերի ընթացքում՝ պարսկա-հռոմեական պատերազմների ժամանակ, Ասորիքը անընդհատ ավերածությունների է ենթարկվում, բաժանվում առանձին մանր իշխանությունների:

Հայերի և ասորիների ռազմա-քաղաքական կապերը ստանում են շատ ավելի մշակութային իմաստավորում, որն առանձնահատուկ շեշտված է դառնում քրիստոնեության ընդունումից հետո:

7-րդ դարի 30-ական թվականներից Արաբական թերակղզուց հյուսիս են ներխուժում մահմեդական արաբները, Դամասկոսը դառնում է խալիֆության մայրաքաղաքներից մեկը: Արաբական կայսրությունը տարածվում է հյուսիսային Աֆրիկայից մինչև Մերձավոր Արևելք ու Պարսկաստան՝ իր իշխանության տակ առնելով հնագույն քաղաքակրթության այնպիսի օրրաններ, ինչպիսիք են Եգիպտոսը, Ասորիքը, Միջագետքը, Հայաստանը:

Հայ-սիրիական կապերի նոր էջ է բացվում Կիլիկյան հայկական թագավորության շրջանում՝ սկսած դեռևս 11-րդ դարից: Սելջուկ թուրքերի արշավանքներից հետո՝ 11-րդ դարից սկսած, հայերի արտագաղթը դեպի հարևան երկրներ և Սիրիա ավելի է մեծանում: Այս նոր տարածքներում հայերը ոչ միայն կարևոր դիրք էին զբաղում արքունիքում ու բանակում, այլև օգտվելով արտաքին քաղաքական իրավիճակներից, օրինակ Խաչակրաց սկսվող արշավանքներից՝ անկախանալու և ինքնուրույնության փորձեր էին անում, որոնք ի վերջո ավարտվում են 12-րդ դարում Կիլիկյան հայկական թագավորության հաստատումով:

Հայ-սիրիական հարաբերությունները նոր փուլ են մտնում թաթարա-թուրքական արշավանքներից հետո և թուրքական տիրակալության շրջանում՝ սկսած 15-րդ դարից: Արդեն Կիլիկիայի Հայկական թագավորության անկումից հետո այնքան շատ հայեր էին գաղթել Սիրիա, որ ձևավորվել էր Հալեպի մեծ գաղութը, որը դեկավարում էր տանուտերը: Հայերի հոգևոր պահանջմունքները բավարարելու համար կառուցվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին, իսկ մինչև 15-րդ դարի վերջը հայերի թիվն այնքան է մեծանում, որ հիմնվում է նաև երկրորդ եկեղեցին:

Բայց 1401 թ. Լենկ Թեմուրի հրոսակները արշավեցին նաև Սիրիա, ավերվեց ու հրդեհի մատնվեց Հալեպը: Տասնվեցերորդ դարի սկզբին Սիրիան ընկավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ. նախորդ դարի մղձավանջից հետո սուլթան Մելիքը համեմատաբար մեղմ քաղաքականություն էր վարում, և դա նպաստեց, որ երկրի արաբ, հայ և այլ բնակիչներ վերականգնեն քաղաքները, աշխուժանա տնտեսությունը: Հետ վերադարձած հայերը առավելապես

հաստատվեցին Միրիայի հյուսիսային մարզերում, իսկ հետո գաղթականության նոր հոսքերի հետ շարժվեցին դեպի Հալեպ, Դամասկոս և այլ հայաշատ քաղաքներ: 17-րդ դարի սկզբում Հալեպում ապրում էր մոտ 3000 հայ:

Օսմանյան տիրակալության շուրջ երեք դարերի ընթացքում Միրիան և այնտեղ ապրող հայերը ենթարկվում էին նույն վայրիվերումներին, ամենափոքր հնարավորության դեպքում զարգացնում էին տնտեսությունը, մշակույթը, հաճախ ենթարկվում նաև ավերումներին:

Միրիահայ գաղութի նոր էջը կապվում է Մեծ Եղեռնի հետ: Դեռևս 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և Հայկական հարցը եվրոպական դիվանագիտություն մտնելուց հետո թուրքական կառավարությունը որոշեց այդ հարցը լուծել Արևմտյան Հայաստանը հայաթափ անելով: 19-րդ դարի վերջից թուրքերի համար պարզ էր, որ երկրին վերջնականապես տեր դառնալու համար իրենք պետք է ստեղծեն Հայաստան առանց հայերի: 1895-1896 թթ. համիդյան կոտորածների, 1909 թ. Ադանայի ջարդերի ժամանակ սկսվեցին տեղահանություններ, որոնք արհավիրքային մեծ չափերի հասան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Օգտվելով պատերազմի խառնաշփոթից և ունենալով դաշնակից Գերմանիայի աջակցությունը՝ երիտթուրքական կառավարությունը 1915 թ.-ի գարնանից, պատրվակ դարձնելով այն, որ հայերը համակիր ու աջակից են իրենց հակառակորդ Ռուսաստանին, սկսեց տեղահանություն դեպի հարավ և կոտորածներ: 1915-16 թթ. Մեծ եղեռնի ժամանակ բռնությամբ միայն 600 հազար հայ գաղթեցվեց Միրիա և Միջագետք, որոնց մեծ մասը ճանապարհին զոհ դարձավ թուրքերի անօրինություններին: Երկրի ներսում ևս տարբեր միջոցներով շարունակվեցին կոտորածները, զազանաբար հոշոտվեցին թուրքական բանակում ծառայող 60 հազար հայ զինվորներ, քրդերի արյունոտ ոճիրի տակ մնացին շատ գյուղեր, բնաջնջվեց ավելի քան 1,5 միլիոն հայ. ողջ մնացածները փախչում էին հարևան երկրներ, նաև հեռավոր Ամերիկա, Եվրոպա, Ռուսաստան և այլուր:

Հարևան երկրներից հայերի համար փրկության օրրան դարձան մանավանդ Միրիան և Լիբանանը: Պատմական երկար դարերի ճանապարհ անցած և տնտեսական ու հոգևոր-մշակութային հարուստ շերտեր ունեցող հայ-սիրիական

հարաբերությունները նոր զարգացումներ ունեցան: Պատահական չէ, որ հենց Միրիան ու Լիբանանը, այսինքն՝ պատմական Ասորիքի տարածքը դարձավ հայերի համար նոր հայրենիք:

Միրիահայության համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին՝ պահպանելու ազգային ինքնությունը, հոգևոր-մշակութային նկարագիրը, իհարկե նաև, ակտիվ դեր խաղալու տնտեսական հարաբերություններում:

Գաղթօջախի լիակատար կազմավորման մեջ կարևոր նշանակություն ունեցավ 1924 թվականը, երբ հայերին Ազգերի լիգայի կողմից տրվեցին ինքնության վկայագրեր, իսկ այնուհետև՝ Միրիայի քաղաքացիություն:

Միրիայի հայ համայնքի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, երբ իշխանության եկավ Հաֆեզ Ալ-Ասադը: Ե՛վ նրա, և՛ որդու՝ Բաշար Ալ-Ասադի օրոք հանդուրժողական քաղաքականություն տարվեց փոքրամասնությունների նկատմամբ ընդհանրապես: Ամրագրվեցին պետության հետ ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները, նպաստավոր պայմաններում շարունակեցին գործել հայկական տասնյակ մարզական ու մշակութային միությունները, բարեգործական հաստատությունները, վարժարանները, սերտացան կապերը Հայաստանի հետ, հայերը ավելի շեշտակի ակտիվ դեր ստանձնեցին Միրիայի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում: Համայնքի կյանքում միշտ կարևոր էր մնում Հայ առաքելական եկեղեցու դերը:

Միրիայի հայ գաղթօջախը ստեղծել է կայուն համակարգ՝ հոգևոր-մշակութային հիմունքներով ազգայինը պահպանելու համար: Նույնքան կարևոր է, որ համարյա բոլոր այս միություններն ու խմբերը կենտրոն ունեն Բեյրութում կամ համակարգված են Լիբանանի նույնաբնույթ կազմակերպությունների հետ, այսինքն՝ հին Ասորիքի տարածքը պահպանում է պատմական ամուր հիմքերի վրա կայունացած հարաբերությունները, որոնք ասորիներից արաբներին անցնելով՝ հիմնականում չեն խաթարել հիմքերի ամրությունը:

Մինչև հիսունական թվականների ավարտը, որոշ սահմանափակումներով, տարրական դասարաններում բոլոր առարկաների ուսուցումը տարվում էր հայերենով, իսկ բարձր դասարաններում՝ միայն հայոց լեզուն, հայ գրականությունը, կրոնը:

1960-ական թվականներին երկրի արաբականացման քաղաքականություն սկսվեց, վտանգի տակ դրվեց հայկական դպրոցների գոյության հարցը, հայերի համար տազնապալից օրեր սկսվեցին: Դպրոցների տնօրեններ նշանակվեցին արաբները, արգելվեց հայագիտական առարկաների դասավանդումը, տարրական դասարաններում՝ հայերենով ուսուցումը, նույնիսկ կրոնի ուսուցման համար տրված փոքր ժամաքանակը լրացվում էր արաբերեն: Երկար ու դժվարին բանակցությունների, ճկուն պահվածքի ու քաղաքականության շնորհիվ հնարավոր եղավ հայկական դպրոցներում, թեկուզ սահմանափակ ժամաքանակով, մայրենի լեզվով ուսուցման թույլտվություն ստանալ: Բայց հայերենը դպրոցում ընդգրկվեց որպես ծիսական լեզու, այսինքն՝ թույլատրվում էր նրանով կատարել կրոնական ծեսեր, աղոթքներ, երգեր. թեպետ ստացած վեց ժամը այս կամ այն կերպ օգտագործվում էր նպատակադիր: Միխթարյանների, կաթոլիկ եւ ավետարանական մի քանի դպրոցներ փակվեցին և վերաբացվեցին 1973թ.-ին և սկսեցին հնարավորինս իրականացնել ազգային կրթա-դաստիարակչական ծրագիրը:

Սիրիահայերի ազգային ինքնության պահպանման գործում կարևոր դեր ունի Հայաստանը: Սիրիահայերին միշտ մտահոգում են Հայաստանում կատարվող իրադարձությունները՝ սկսած սոցիալական բևեռացումից ու արտագաղթից մինչ աղանդների տարածումը, նրանք աշխատում են մեղմ նայել այդ ամենին, քանի որ Հայաստանը ընդունում են որպես կայացման գործընթացում գտնվող հայրենիք: Ներքին հարաբերություններում էլ, տեղացիների հետ որևէ հակադրություն չունենալով, սիրիահայերը աշխատում են շփվել հայրենակիցների հետ: Պատմությունը նրանց մեջ անապահովության բնագոյ է դրել ոչ միայն անցյալի և ինչ-որ չափով ներկայի, այլև ապագայի նկատմամբ, որին նպաստում է իսլամական միջավայրը ևս:

Պատմական փորձն ու գենետիկական գիտակցությունը այս անգամ ևս չսխալվեցին, Սիրիան «արաբական գարունի» մղձավանջներում հայտնվեց դիվանագիտական նենգ խաղերի հանգուցակետում: Սիրիահայությունը իր ամենաձանր օրերն է ապրում ցեղասպանությունից հետո: Երկու տարուց ավելի տևող քաղաքացիական կռիվները կործանման եզրին են հասցրել Սիրիան, կան տասնյակ հազարավոր զոհեր, միլիոնավոր մարդիկ են փախստական դարձել, և

նրանց մեջ քիչ չեն հայերը: Մինչդեռ սիրիահայ համայնքը ամենակազմակերպվածներից մեկն է Սփյուռքում, և նրա կորուստը կբերի ծանր հետևանքների՝ աշխարհի տարբեր մասերում ցրիվ եկած սիրիահայության հայապահպանման գործից սկսած մինչև Հայ դատի ու պահանջատիրության խնդիրները:

Սիրիայի հայերը այս նոր իրավիճակներում ևս փորձում են պահել քաղաքական չեզոքություն՝ իշխանության նկատմամբ դրական դիրքորոշումով, մանավանդ կասկած կա, որ ընդդիմության հաղթանակից հետո իշխանության կգան «մահմեդական եղբայրները» կամ նույնաբնույթ ինչ-որ այլ ուժեր: Չպետք է անտեսել, որ սիրիական ճգնաժամի մեջ ամերիկա-եվրոպական ակտիվ դերակատարումը այս դեպքում ևս չի թաքցնում թուրքական ձեռագիրը, որն ակնհայտ է: Հայ համայնքը, դրական չեզոքություն պահպանելով, ի վերջո չի կարող լիովին անհաղորդ ու անտարբեր մնալ դեպքերի նկատմամբ, քանի որ օրհասը նաև իր տուն է մտնում, իսկ Սիրիան նրա երկրորդ հայրենիքն է: Հայ եկեղեցիները, անկախ դավանանքային տարբերություններից, միություններն ու կուսակցությունները աջակցություն են արտահայտում կոնֆլիկտի հաղթահարման և խաղաղության հաստատման ուղղությամբ:

Մինչ այդ պատերազմը շարունակվում է, և Սիրիայից օր օրի ավելի շատ հայեր են արտագաղթում, նրանք գնում են տարբեր երկրներ. քիչ չեն նաև Հայաստան ներգաղթողները: Բարեբախտաբար բոլոր առումներով եռանդուն գործեց ու գործում է Սփյուռքի նախարարությունը: Ստեղծված է Սիրիահայության օժանդակության հիմնադրամը, բավականին համակարգված է տարվում տեղաբաշխումը, սոցիալական աջակցությունը:

Եթե Մեծ Եղեռնից հետո Սիրիան, Լիբանանն ու այլ երկրներ հայերին հարազատորեն ընդունեցին, կոտորածներից մազապուրծ մարդիկ կարողացան վերագտնել իրենց ու վերակենդանանալ, երկրորդ հայրենիք ստեղծել, ապա որքան առավել նրանք պետք է տանն զգան իրենց բուն հայրենիքում: Սա կառավարության, Սփյուռքի նախարարության և մեր բոլորի պարտքն է: Գործնական-բովանդակային առումով արդյունավետ լինելու համար պետք է լավ ճանաչել նրանց, ում հետ աշխատում ես:

Պետք է վերհիշել թեկուզ հեռավոր դարերից սկիզբ առած ճանապարհն ու նրա քերած առանձնահատկությունները, ընդհանուր ազգային յուրահատկությունների մեջ պատմական ճակատագրի պարտադրած նոր որակները, վերելքներն ու վայրէջքները, հոգևոր-մշակութային բուն հատկանիշների պահպանումն ու նահանջները՝ սկսած լեզվից ու հավատքից, վերջացրած ազգային սովորույթներով: Պետք է լավ ճանաչել և ըստ այդմ ուշադիր ու հոգատար լինել: Այս ձեռնարկն ու պատմական փոքրիկ ակնարկը հենց այդ ճանաչողության ծրագիրն ու նպատակն ունեն:

Ռոբերտ Թոխմախյան
Արևմտահայերենի բաժնի
առաջատար գիտաշխատող, Բ.գ.դ.

ՄԻՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արևմտահայերենը զարգացման իր ուղին անցել է հիմնականում Մեծ Եղեռնից հետո Պոլսի, Լիբանանի (ներառյալ Սիրիա), Ֆրանսիայի և ԱՄՆ-ի գաղթօջախներում:

Ընդհանուր առմամբ արևմտահայերենն ունի գրական կանոնարկված համակարգ, որն արտահայտվում է այդ գաղթօջախներում գրեթե նույնական կրթական համակարգով:

Գրական արևմտահայերենը, այսպիսով, ունի ընդհանրական բնույթ, և այն չի առանձնանում այս կամ այն երկրում:

Ուսումնասիրության բնույթը սիրիական հայ համայնքի արտասանական-հնչյունական առանձնահատկություններն են, որոնք էապես չեն տարբերվում լիբանանյանից:

Լեզվակիրները, այնուամենայնիվ, նշում են, որ առկա լեզվական որոշակի տարբերությունները պայմանավորված են արաբերենի ազդեցությամբ, մասամբ էլ տարբեր բարբառների առկայությամբ:

Սիրիահայ գաղութում բարբառակիրները համեմատաբար հոծ խմբերով են ապրում և նրանց հատուկ ու հարազատ են սեփական բարբառների գործածությունը (Բեյլանի, Քեսաբի, Հաճընի և այլն): Գրական արևմտահայերենը Սիրիայում և Լիբանանում առանձնակի տարբերություններ չի դրսևորում, քանի որ նրանց կրթական համակարգերը գրեթե նույնական են (դասագրքերը, մամուլի լեզուն, համայնքային տարբեր խմբավորումների ու միջոցառումների լեզուն և այլն):

Գրական արևմտահայերենի պարզ ձայնավորների կողքին առանձին ուսումնասիրողներ դիտարկել են նաև քմային ու ձայնավորի գոյությունը, որով համակարգում առանձնանում են երկու կարգի հնչույթներ:

Դեռևս Մ. Աբեղյանը իւ երկբարբառի արտասանությունը բարբառներում մոտեցնում էր ֆրանսերենի ու գերմաներենի քմային ու ձայնավորի արտաբերությանը:³

Հետագայում այսպիսի հնչումը վերագրել են գրական արևմտահայերենին: Իւ-ի նման արտաբերությունը դիտարկում են բառի տարբեր դիրքերում՝ մի կողմից որպես երկհնչյուն յու, մյուս դեպքում որպես քմային ու ձայնավոր: Իհարկե, արևմտահայերենի բազմաթիվ դասագրքերում իւ->յու արտաբերությունը որպես հաստատուն իրողություն է ներկայացվել (ինչպես օրինակ՝ Աբրահամյան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ., *Հայերեն լեզուի դասագիրք*, Ե., 1966, Դորա Սաքայան, *Western Armenian for English-speaking World*, Mountreal, 2000, էջ 124), սակայն ավանդաբար այն շարունակվել է դիտվել որոշ վերապահությամբ ու-ի տարբերակ կամ երկբարբառ⁴:

Մեր դիտարկումով նման մոտեցումը պայմանավորված է առանձին անհատների օտարախոս արտաբերությամբ, չունի համակարգային բնույթ և լինելով դիրքային ու փոփոխակային, այնուամենայնիվ, չի դիտարկվում որպես հնչույթային հակադրություն, չունի ընդհանրական բնույթ:

Նման մոտեցմամբ պետք է տրամաբանական լիներ նաև մյուս ձայնավորների քմայնացումը, այսինքն այդ երևույթը պիտի տարածվեր նաև օ-ի, ա-ի, է-ի վրա: Պարզելու համար, թե գրաբարյան իւ երկբարբառին ի՞նչ է փոխարինել, անհրաժեշտություն առաջացավ այդ երևույթը դիտարկել փորձառական եղանակով:

Հայտնի է, որ գրաբարյան երկբարբառները ժամանակակից հայերենում պարզեցվել են՝ փոխարինվելով յ + ձայնավոր կապակցությամբ՝ յա, յո, յու և այլն: Այսինքն, *գիւղ* - *գյուղ*, *արդեոք* - *արդյոք*, *մատեան* - *մատյան* և այլն: Այս իրողությունը հատուկ է նաև արևմտահայերենին: Եթե բառակզբի *իւր* կապակցությունը հնչվում է յու, ապա *իւր* և *ուր* բառերում հնչույթային հակադրությունը (յ-օ) առկայությամբ /բացակայությամբ է արտահայտվում. օրինակ՝ *գայլ* և *գալ* (արևմտահայերենում՝ *քայլ* և *քալ*) հակադրության յ -ի առկայության /բացակայության է հանգում:

³ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. 2, Ե., 1974, էջ 95-96:

⁴ Ռ. Սաքապետոյան, *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006, էջ 14:

Փորձառական ուսումնասիրությունը (սիրիահայ լեզվակիրների արտասանական վերլուծությունը) թույլ է տալիս փաստել, որ հատկապես նրանց խոսքում *յու* կապակցությունն ունի իր ֆիզիկական արտահայտությունը, որտեղ քմային հատկանիշը չի տարածվում ձայնավորի ողջ սպեկտրի վրա, այլ ունի իր ինքնուրույն պատկերը:

Այդ պատկերում կարելի է չափել *յ*-ի տևողությունը, որը մոտ է պայթական բաղաձայնի երկարությանը:

Ձայնավորական համակարգում պետք է նկատի ունենալ այն, որ կասկածելի է, ինչպես վերը նկատեցինք, նաև մեկ այլ քմային ձայնավորի վերագրումը արևմտահայերենին՝ *էօժեն* որպես մեկ ձայնավոր⁵. ընդ որում այդ երևույթը բացատրելով օտար բառերի փոխառությամբ (մեր պարագայում՝ ֆրանսերենի): Սա էլ, ըստ տրամաբանության, պետք է տարածվեր մյուս ձայնավորների վրա, ինչը արևմտահայերենին հատուկ չէ: Այսպիսով գրական հայերենի երկու տարբերակներում էլ գործում է ձայնավորական նույն համակարգը. այն է՝ *ա, օ, է, ի, ու, ը*:

Արտաբերական նման առանձնահատկությունը հատկապես տարածված է օտար անձանց խոսքում, փոխառյալ բառերի գործածության ժամանակ երբեմն դրսևորում են փոխաստու լեզվի արտաբերական ընդօրինակումներ: Այսպես, օրինակ, ռուսերեն տիրապետողների խոսքում *Մոսկվա* բառի փոխարեն *Մասկվա* բառի տարբերակի գործածությունը: Հայերեն գրական նորմի տեսակետից նման արտաբերությունները կանոնական չեն և մերժելի են. նույնը ունենք անգլախոսների դեպքում՝ *Այզնհաուրը*՝ *Էյզենհաուերի* փոխարեն, կամ ռումինահայերի կողմից արևելահայերենում տարածված *Բուխարեստ* անվան փոխարեն *Պուքրեշ*, ֆրանսահայերը ասում են *Պաղի*՝ *Փարիզի* փոխարեն և այլն:

Միշտ չէ, որ փոխառյալ բառերի հարազատ հնչարտաբերությունը խրախուսելի է, քանի որ գործածության մեջ եղող բառերը ունեն ավանդական դառնալու միտում և պայմանավորված են մեծամասամբ նրանց գրային տառադարձությամբ:

⁵ Մ. Մկրտիչեան, *Քերականության դասեր*, Բ գիրք, տպ. Արևելք, Հալեպ, 1962, էջ 9:

Ուշագրավ է նաև այն, որ բաղաձայնական համակարգում արդեն դիտարկված եռաստիճանի անցումը երկաստիճանին նույնպես երբեմն կասկածներ է առաջացնում: Այնուամենայնիվ, երկաստիճանն ունի եռաստիճանի հնչական տարբերակվածություն:

Բաղաձայնական համակարգում լեզվակիրները նշում են **բ-ռ** հակադրության բացակայություն. իրոք, սրանց տարբերակումը հնչույթային չէ և հաճախ, ինչպես իրավացիորեն նշում են ուսումնասիրողները (Արտեմ Սարգսյան, Ռուբեն Սաքապետոյան), *Բաֆֆին* հնչում է ն՝ *Բաֆֆի*, և՝ *Ռաֆֆի*⁶:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ թեև հնչույթային հակադրություն չկա և խոսքում գերազանցապես գործածվում է **բ** ձայնորդը, այնուամենայնիվ կան բառեր, որոնցում մեծամասամբ հանդես է գալիս համեմատաբար կոշտ հնչույթը, ու այն չունի որոշակի բաշխվածություն, ուստի չի կարելի դիտարկել որպես հնչույթային տարբերակ:

Այնուամենայնիվ առանձին բառերում **ռ**-ի հնչարտաբերությունը չի նմանվում **բ** -ին: Օրինակ՝ **ն** ձայնորդից առաջ ընդհանրական է **ռ**-ի գործածությունը՝ *գառնուկ, դառնալ, առնել* և այլն:

Սիրիահայ ինֆորմանտների հնչարտասանական դրսևորումների փորձառական ուսումնասիրությունը հանգեցրեց նրան, որ այն դեպքերում, երբ կարող են առաջանալ հնչյունական համանուններ, իրենք դիմում են բառական այլ միջոցների օգնությանը. օրինակ՝ *քարն ընկավ ձորը և գառն (քարն) ընկավ ձորը* գույգի դեպքում օգտագործում են *գառնուկն ընկավ ձորը* տարբերակը: Անշուշտ, համանունությունը կանխվում է համատեքստում, իմաստի թելադրանքով, քանի որ դրանից դուրս նախադասությունները գոյություն չունեն:

Արևմտահայերենի հետազոտողներն այն մտքին են, որ, այնուամենայնիվ, բաղաձայնական համակարգի եռաստիճանություն կարելի է նկատել նաև արևմտահայ արտասանվածքում: Դրանք թեև հնչույթային արժեք ձեռք չեն բերել, սակայն դրանց արտասանության ժամանակ նկատելի են որոշակի հնչարտասանական տարբերություններ: Վերջիններս հատկապես նկատելի

⁶ Սարգսյան Ա., *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, Ե., 1985, էջ 25: Սաքապետոյան Ռ., *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006, էջ 13:

խաթարումներ են առաջացնում հատուկ անունների գործածության դեպքում: Նկատելի է, որ արևմտահայերենի և արևելահայերենի գրական տարբերակների առաջացման ժամանակ արևմտահայերենը շատ ավելի է ազդվել գրավոր խոսքի առանձնահատկություններից, մինչդեռ արևելահայերենի գրական արտաբերությունը ընդհանրացման շատ ավելի լայն շրջանակներ է ընդգրկել: Իհարկե դրան նպաստել է արևելահայերենի պետական հովանավորությունը, ռադիոյի, հեռուստատեսության և մամուլի առավել լայն տարածվածությունը:

Սա, թերևս, մեր երկու գրականների փոխազդեցության արդյունք է, երբեմն էլ գրավոր խոսքի ազդեցություն՝ հատկապես գրագետ մարդկանց շրջանում:

Արևմտահայերենի հնչերանգային բնորոշ տիպերի մեջ կարելի է տեսնել հատկապես դիապազոնի բարձրացում հարցական ու բացականչական նախադասությունների ձևավորման մեջ: Այն նկատելի է առավելապես ոչ եղանականիշ բառերի բացակայության դեպքում: Այս իրողությունը դեռևս լուրջ փորձառական ուսումնասիրության կարիք ունի:

Ռիթմի տեսակետից տարբերություններ կարելի է նկատել հատկապես Միրիայի տարածքում, որտեղ այն ավելի հանդարտ է, խոսքի տեմպը (արագությունը) մեծ չէ և բառերի հնչյունափոխության դեպքերը՝ պայմանավորված բառաշեշտի փոփոխությամբ, առանձնապես նկատելի չեն:

Այստեղ էլ, հավանաբար, իր դերն է խաղացել արաբական միջավայրը: Այսինքն, լեզվական արտասանվածքի ձևավորման վրա կարող են իրենց ազդեցությունը թողնել արտաքին գործոնները, այդ թվում՝ լեզվական միջավայրը:

Պերճուհի Վարդապետյան
Արևմտահայերենի բաժնի
ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ.

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ սիրիական կապերի պատմությունից

Դեռ շատ հնուց Սիրիայում և Միջագետքում հաստատվել էր հայ բնակչություն. հնագույն ժամանակներից ի վեր հայերը կազմում էին Եդեսիայի բնակչության մեծ մասը: 12-13-րդ դարերում հայերն արդեն կազմում էին Սիրիայի և Հյուսիսային Միջագետքի ազգաբնակչության նկատելի հատվածը, ուր 10-13-րդ դարերում արդեն կար եպիսկոպոսական աթոռ:

16-րդ դարի սկզբներին հայերն ավելի տարածվեցին՝ Բերիա կամ Հալեպ, Լաթաքիա, Բեյրութ, Դամասկոս, որոնք դարձան հայաշատ քաղաքներ:

Հալեպի գաղութը 14-րդ դարի վերջերից սկսած գնալով բարգավաճում էր: 15-18-րդ դդ. հալեպահայ գաղութը կազմավորվել էր Հայաստանի տարբեր վայրերից և տարբեր պատճառներով այնտեղ եկած հայերից: Հալեպահայության մեջ զգալի թիվ էին կազմում ջուղայեցիները, երևանցիները, արցախցիները, էրզրումցիները, սեբաստացիները, սասունցիները, ուռհայեցիները և այլք: 1616 թվին Հալեպում կար 300 տուն հայ, այսինքն՝ մոտ 3000 հայ: 17-18-րդ դդ. հայերեն ձեռագիր մատյաններում այն հիշատակվում է Արևելքի խոշորագույն շուկաների շարքում: Հ. Թովուզյանի⁷ կազմած աղյուսակից երևում է, որ հայեր կային Սիրիայի բոլոր նահանգներում, սակայն նրանց հիմնական զանգվածը հաստատված էր Հալեպի սանջակում:

Լեզվական իրավիճակը

Սիրիայում առհասարակ պահպանվել էր մայրենի լեզուն, սակայն տարբեր քաղաքներում հայախոսության մակարդակը տարբեր էր: Հալեպահայերը աչքի էին ընկնում իրենց հայերենապաշտությամբ: Դրա համար էլ աստիճանաբար

⁷ Հ. Խ. Թովուզյան, *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն*, Ե., 1966, էջ 321:

բարելավվում էր հայերենի իմացության վիճակը, թեև Սիրիայի շատ շրջաններում հայերը խոսում էին տարբեր բարբառներով:

Առհասարակ սիրիահայ համայնքը Սփյուռքի ամենահին համայնքներից է և այդ պատճառով էլ համարվում է Սփյուռքի մայր գաղութը, իսկ բնակիչները կոչվում են «հին հայեր»:

1915 թ. Մեծ Եղեռնից հետո զգալի թվով հայեր հաստատվեցին Սիրիայում: Թեև եկվորները տարբեր լեզվական մշակույթների կրողներ էին, սակայն շուրջ երկու տասնամյակ անց գրական լեզուն բոլոր շերտերի համար դարձավ հասարակական, ընդհանուր լեզու:

Հայերը կարողացան պահպանել իրենց ինքնությունը՝ լեզուն, գիրը, գրականությունը: Իհարկե, հայերն էլ շփվում էին արաբների հետ, և տեղի խոսակցական լեզուներից մեկն էլ արաբերենն էր, որը զգալի ազդեցություն է ունեցել գաղութի խոսակցական լեզվի վրա: Դեռևս Հր. Աճառյանը նկատել է հայերենում օգտագործվող արաբերեն բառերի մի շարք: Դրանց թվում՝ **դալատ** բառը, որ նշանակում է սխալ, **դանթար** (խանթար), որ նշանակում է քաշ, կշեռք, **դավի**=վեճ. սա հարադրության մաս է դարձել՝ **դավի անել**=վիճել, **շամս**=արև, **հավա**=օդ:

Արաբերենից փոխառություններ դեռևս զգալի էին Մխիթար Հերացու 1184 թ. գրված «Ջերմանց մխիթարութիւնը» գրքում: Առանձնապես շատ էին արաբերեն բառերը դեղատոմսերում:

Բնականաբար խոսակցական լեզվում կային շատ փոխառություններ ինչպես ուղղակիորեն թուրքերենից, արաբերենից, այնպես էլ միջնորդաբար այլ լեզուներից անցած:

Ստորև բերվող բառացանկը շատ տարածված է առօրյա խոսակցական լեզվում.

ամսօ – հորեղբայր, *անթի* – հորաքույր կամ մորաքույր, *բիժամա* – գիշերազգեստ, *եսհն* – օ՜ֆ, ա՞յ մարդ, *ելէկ* – բաճկոնակ, *զեվզեկ* – շատախոս, դատարկախոս, *էմմի* – հորեղբայր, քեռի, *էն* – ամենից, *թանթի* – հորաքույր, մորաքույր, *թրէն* – շոգեկառք, *իշտահ* – ախորժակ, *իշտէ* – ահա, ահավասիկ, *լահանայ* – կաղամբ, *հայտէ* – դե՛հ, օն, *հէչ* – բնավ, *մահանայ* – պատրվակ, *նասրր* – կոշկոռ (կոշտուկ), *նէ* – եթե, *նէնէ* – մեծ մայրիկ, *նոթ ընէլ*, *նոթի առնէլ* – նշում

կատարել, *ուլան* – ծօ, չաքէթ – բաճկոն, *չոճուխ* – երեխա, *պագար* – շուկա, *պաճանաղ* – քենակալ, *պէ* – էհ, *պէլքի* – թերևս, գուցե, *պէպէք* – գրկի երեխա, *պիլէ* – նույնիսկ, անգամ, *պիրա* – գարեջուր, *սալաթ(ա)* – աղցան, *տոլմա* – տերևով լիցք, *վալիզ* – ճամպրուկ, *տահա* – տակավին, *տայտայ* – քեռի, *տէտէ* – մեծ հայրիկ, *րեզիլ* – խայտառակ, *րեզիլ ըլլալ* – խայտառակվել, *փիլավ* – եղինձ (փլավ), *փիս* – գեշ, աղտոտ, *քէփէզէ* – խայտառակ, *քրաւաթ* – փողկապ, *օթօ* – ինքնաշարժ, *ֆրեն* – արգելակ:

Արևմտահայ բառեր: Միրիահայ գաղթօջախի լեզվում զանազանվում են բառային միջոցներ, որոնք գգալիորեն տարբերվում են Սփյուռքի այլ գաղթօջախներում գործածվող ձևերից, թեև դրանց մի մասը հարազատ է նաև լիբանանահայ համայնքին.

հրաժեշտ առնել – հրաժեշտ առնել (*Սաթենիկ հրաժեշտ կ'առնէ ինձմէ*), *յստակատես* – գուշակ, *բարօր կեանք* – լավ կյանք, *ծամոն* – ծամոց, *շարիկ գրիչ* – մշտահոս գրիչ, *դրսերևույթ* – արտաքին տեսք, *դաշտավայր* – դաշտագետին, *դահիկ* – կարճ պահ, *տուն տալ* – առիթ տալ, *եզական* – եզակի, *խուլերա* – քուլերա, *պոռչտուք* – բղավոց, *երկրագունտ* – երկրագունդ, *հոսկէ* – հոնկէ, *երթնեկի* – ոստիկանական կառք – ոստիկանության մեքենա, *խտացեալ դարմանումի բաժին* – բոքս, *հիմ* – հիմք:

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Հայերենի երկու տարբերակներում էլ դարձվածքները լայն կիրառություն ունեն: Գրական երկու լեզուներում էլ կան ինչպես նույնություններ, այնպես էլ տարբերություններ՝ կապված շրջապատող միջավայրի, ապրելակերպի, հոգեկան կերտվածքի, օտար լեզուների ազդեցության հետ: Մեր կողմից ներկայացված դարձվածքները համեմատաբար լայն տարածում ունեն Միրիահայ գաղութում: Ներկայացվող ցանկը լիակատար չէ, ուշադրություն ենք դարձրել առավել գործածական տարբերակների վրա: Օրինակներ՝

Երկար ըրիր, թող տուր օձիքս:

Ուսէս վար իջած չունիս:

Տաշուած քարը մէջտեղ չի մնար, անկիւնաքար կ'ըլլայ:

Փնտռողը կը գտնէ:

Համբուսած օրերը շուտ կը վերջանան:

Արևը կամաց-կամաց ջերմութիւն տալէ կը դադրէր:

Աստուած հետդ ըլլայ:

Աստուած փորձանք չբերէ գլուխդ:

Այդ շան աղջիկը իսելքդ առեր է:

Արիւնս չորցաւ:

Փամփուշտ զարնէիր, կայթիլ մը արիւն չէր ելլեր ինձմէ:

Ձայնանիշի առնել (նոտագրել):

Օհանը քսանհինգին նոր բարև տուած տղա մըն էր:

Օդին մէջ կախել մեր ցտեսութիւնը:

Զինք խաղի բերել:

Պարապ տուր (թէթն նայիր):

Արևմտահայերենով գործածվող դարձվածքների մեծամասնության մեջ նկատելի են արևելահայերենին բնորոշ նմանություններ՝ պայմանավորված նույն լեզվամտածողությամբ:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՕՐԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Գրական արևմտահայերենի հատուկ անունները գրեթե չեն ենթարկվում միասնական կանոնարկման:

Առաջնահերթ է գրական լեզվի երկու ճյուղերի ուղղագրության հարցերի գիտական կանոնարկումը:

Հաճախ բանավեճեր են մղվում՝ նպաստելու գրական արևելահայերենի և արևմտահայերենի ուղղագրական համակարգերի մերձեցմանը: Սակայն ուղղագրության բազմաձևություններ առկա են ոչ միայն արևելահայ և արևմտահայ տարբերակներում, այլև հենց բուն արևմտահայերենում կան ուղղագրական տարբերություններ: Նկատվող հնչյունական տարբերությունները խաթարում են լեզվական միասնականությունը: Այստեղ քննության նյութ ենք դարձրել մի շարք հատուկ անուններ, որոնք տարբեր գրություն ունեն: Դրանք զանգվածային լրատվամիջոցներում գործածված հատուկ անուններն են, որոնք ունեն գրության մի քանի տարբերակներ: Սփյուռքի տարբեր գաղթօջախներում հրատարակված հայերեն տեքստերը լի են տեղանուններով, օտար անձնանուններով, և անհրաժեշտություն է առաջանում դրանք տառադարձել հայերենով:

Արևմտահայ մամուլում հաճախ նույն հատուկ անունը տառադարձվում է տարբեր ձևերով՝ պայմանավորված օտար լեզվի սկզբնաղբյուրով: Այդ պատճառով էլ չկա ձևերի միօրինակություն, առաջանում են ուղղագրական զուգաձևություններ, նույնիսկ նույն լրագրում տվյալ հատուկ անունը գրության տարբեր ձևեր ունի՝ *Կլենտէլ // Գլենտէլ* – Ասպարեզ, *Արժանդին // Արկենթինա* – Վատիկանի ձայնասփյուռ, *Շուէտ // Շուէտ* – Ազատ օր:

Պետք է հաշվի առնել նաև այն գործոնը, որ արևմտահայերենում գրության երկակիությունը պայմանավորված է մի կողմից արևմտահայերենի

բաղաձայնական երկշարք համակարգի գոյությամբ, մյուս կողմից՝ հնչարտաբերության և գրադարձության առանձնահատկություններով: Արևմտահայերենում պարզ խուլերը դառնում են ձայնեղներ, բոլոր ձայնեղները, տեղաշարժ-տեղափոխություն կրելով, արտասանվում են որպես շնչեղ խուլ: Ստացվում է երկու կարգի շնչեղ խուլ՝ բուն շնչեղ խուլ և ձայնեղներից առաջացած շնչեղ խուլ: Սրանից էլ առաջանում է շնչեղ խուլ հնչյունների երկակի գրություն: Ինչպես (թավ տառատեսակով ներկայացվում են Սիրիայում գործածվող տարբերակները).

Արժանթին - Ազդակ 10.09.2013, Ասպարեզ 17.10.2013, Հայրենիք, Ազատ օր, Երեբունի-հայկական անկախ լրատու

Արժանդին - Վատիկանի ձայնասփյուռ 21.09.2013

Արկենթինա - Վատիկանի ձայնասփյուռ 20.03.2015,

Գալիֆորնիա - Հայրենիք 27.09.2103, Նոր Յառաջ 30.10.2009

Քալիֆորնիա - Ասպարեզ 14.04.2011, Լրատու 06.09.2013,

Ճափոն - Ազդակ 15.11.2013, Լրատու 10.06.2013, Ասպարեզ 24.06.2010

Ճաբոն - Մարմարա 11.11.2011, Լրատու 03.11.2012, Լրաբեր (Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պարբերական տեղեկատու), Վատիկանի ձայնասփյուռ 10.05.2011,

Պելճիզա - Ազատ օր 08.12.2011, Երեբունի-հայկական անկախ լրատու

Պելճիքա - Ասպարեզ 15.10.2013, Ազդակ 27.06.2012, Լրատու, Հայրենիք 06.03.2013,

Քանադա - Ազդակ 27.09.2013, Եռագույն (*Hayastan*) 22.11.2012, Ասպարեզ 02.07.2008, Հորիզոն 01.11.2013, Օրեր (Եվրոպական անկախ ամսագիր) 19.11 2013

Գանատա - Հայրենիք 23.10.2013, Լրատու 27.11.2013, Ասպարեզ 10.03.2012
Զարթոնք:

Ջուգաձևություններ առաջանում են հատկապես հետևյալ երկու դեպքում.

ա) *o* հնչյունի գրության ժամանակ, որը գրվում է նաև *x*: Ինչպես՝

Լիզպոն - Ասպարեզ, Ազատօր, Հայրենիք

Լիզպոն - Ասպարեզ,

Լօզան - Ազատօր, Ասպարեզ, Հայրենիք

Լոզան – Ազատ օր, Ազդակ, Ասպարեզ, Հայրենիք,

Մթօքհոլմ - Ազատ օր, Ազդակ, Վատիկանի ձայնասփյուռ

Մթօքհոլմ - Ազատօր,

Սկովտիա - Վատիկանի ձայնասփյուռ 02.08.2012

Մքոթլանտ - Ազդակ 19.06.2011,

Ֆրեզնօ – Ասպարեզ, Ազատ օր

Ֆրեզնօ – Ասպարեզ, Ազատ օր:

p) **Է** հնչյունի գրության ժամանակ, որը գրվում է նաև **է**-ով, օրինակ՝

Բեթղեհեմ - Նոր Ջուղա , Եռագույն

Բեթղեհեմ-Վատիկանի ձայնասփյուռ, Ասպարեզ 29.12.2011,

Ինտոնեզիա - Լրատու 3.10.2013, Հայրենիք 7.11.2012, Վատիկանի ձայնասփյուռ 24.07.2009

Ինտոնեզիա - Ազդակ 08.08.2012, Ասպարեզ 09.08.2012, Վատիկանի ձայնասփյուռ 2013.10.09, Ազատ օր 02.05.2013, Արձագանք 7.02.2012,

Իսկենտերուն – Հայրենիք, Լրաբեր, Լրատու

Իսկենտերուն - Գեղարդ, Ասպարեզ 06.04.2011,

Լիքսեմպուրկ - Ազատօր, Ասպարեզ, Հայրենիք

Լիքսեմպուրկ- Ասպարեզ, Ազատ օր, Նոր Յառաջ հոկտեմբեր 30. 2009,

Լոս Անճելլոս - Ասպարեզ 09.12.2013, Ազդակ 08.11.2013

Լոս Անճելլոս - 03.08.2012 *Bolsohaysnews*,

Հալեպ - Ազատ օր, Ասպարեզ, Վատիկանի ձայնասփյուռ, Հայրենիք, Ազդակ

Հալեպ - Ազատ օր, Վատիկանի ձայնասփյուռ, Ազդակ,

Մոնթրեալ - Ազատ օր 21.07.2011, Ջարթոնք, Հորիզոն 02.08.2013

Մոնթրեալ - Համազգային 05.2012,

Նորվեկիա - Ազդակ 15.06.2011, Ասպարեզ, Ազատ օր 13.05.2013

Նորուեկիա- Եռագույն 24.01.2013,

Նորվեկիա - Վատիկանի ձայնասփյուռ 26.05.2012

Շուէտ – Ազատ օր, Ասպարեզ, Վատիկանի ձայնասփյուռ, Համազգային

Շուէտ – Ազատ օր,

Պրիքսել - Ասպարեզ, Ազատ օր, Վատիկանի ձայնասփյուռ, Հայրենիք, Ազդակ

Պրիքսել - Ասպարեզ, Ազատ օր, Վատիկանի ձայնասփյուռ, Հայրենիք, Ազդակ,

Պուքրեշ - Ազդակ, Ազատ օր, Ասպարեզ

Պուքրեշ - Ազդակ, Ազատ օր, Ասպարեզ:

Զուգաձևություններ ի հայտ են գալիս պարզ խուլի դեպքում, երբ արևմտահայերենը, չունենալով այդ հնչույթը, բառը տառադարձում է կա'մ ձայնեղով, կա'մ շնչեղ խուլով.

Ամսթերտամ - Ազատ օր, Հայրենիք, Ասպարեզ, Ազդակ

Ամստերտամ - Ազատ օր,

Գահիրե - Ազատ օր, Ասպարեզ, Ազդակ

Կահիրե - Ազատ օր,

Կլենտել - Ասպարեզ 09.12. 2013, Ազդակ 29.06.2013, Ազատ օր

Գլենտել - Ասպարեզ 03.09.2013:

Զուգաձևություններ ստացվում են նաև սուլական և շփական հնչյունների առկայության դեպքում:

ա) **Սուլականների դեպքում`**

Թունուզ - Հայրենիք (շաբաթաթերթ), 1.09.2012, 18.09.2011, Ազատ օր (օրաթերթ), Ազդակ (օրաթերթ) 20.03 2012

Թունիս - Լրատու 07.08.2013,

Ուելս - Ասպարեզ, Ազատ օր, Հայրենիք

Ուելզ - Ասպարեզ:

բ) **Շփականների դեպքում`**

Միշիկըն - Ասպարեզ 15.07.2013, Հայրենիք 10.05.2013, Լրաբեր (Պատրիարքութիւն Հայոց Կ. Պոլսոյ)

Միշիկըն - Վատիկանի ձայնասփյուռ 28.12.2009, Ազդակ 12.12.2012:

Զուգաձևություններ առաջանում են, երբ արևմտահայերենը փորձում է պահպանել մի դեպքում սկզբնաղբյուրի գրության, մյուս դեպքում այդ բառի հնչման ձևը.

Ազրպէջան - Լրատու, հոկտեմբեր 02, 2013, Հորիզոն, օգ. 13, 2013, Զարթոնք, Լրատու

Ատրպէջան - Ազատ օր 11.04.2012, Ասպարեզ 10.12.2013,

Մարտի - Ասպարեզ 27.01.2012, Ազատ օր 27.01.2012, Ազատ օր 08.10.2013,
 Եռագույն 27.01.2013

Մարտի - Ազդակ 03.03.2012,04.10.2013,Արձագանք 09.12.2011,

Միւնիխ - Ասպարեզ, Ազդակ, Վատիկանի ձայնասփիյու

Միւնիխեն - Ասպարեզ, Եռագույն,

Պարսելոնա - Ազատօր, Ասպարեզ, Ազդակ, Արձագանք

Պարսելոն - Ազատ օր,

Պոսթըն - Հայրենիք 14.11.2013 Ազդակ 06.08.2013, Ասպարեզ 06.07.2011,
 Լրատու, Ազատ օր

Պոսթոն – Վատիկանի ձայնասփյուռ 01.11.2013, Հորիզոն 04.12.2013,

Ուրուկուայ - Հ.Յ.Դ բիրոյի պաշտօնական կայք26.10.2013

Ուրուկուէյ - Ազդակ 19.09.2013, Ասպարեզ 16.11.2012, Երեբունի-հայկական
 անկախ լրատու,

Փարակուայ - Հորիզոն, Հայրենիք24.10.2013, Ազատ օր 26.07.2012

Փարակուէյ-Ասպարեզ 21.07.2011, Ազդակ 22.07.2011,

Քուպա – Ասպարեզ, Ազդակ, Ազատ օր, Հայրենիք

Քիւպա – Ասպարեզ, Ազատ օր:

Անձնանունների պարագայում, ըստ սիրիահայերի վկայությունների,
 տարբերակներից մեկին կամ մյուսին հստակ գերապատվություն չի տրվում:

Մամուլում զուգաձևություններ նկատվել են նաև իգական և արական անուններում :

Իգական անուններ՝

- Գայիանե - Գայեանե
- Անոյշ - Անուշ
- Եսթեր - Եսթեր
- Զապել - Զապել
- Էլմաս - Էլմաստ - Էմասթ
- Ժանեթ - Ժանեթ
- Մատլեն - Մատլեն
- Ովսաննա - Օվսաննա

Վալենտինա - Վալենթինա - Վալանթին

Վերժինե - Վըրժինիա - Վերժին

Օլգա - Օլկա

Արական անուններ՝

Աղեքսանդր - Աղեքսանտր

Անտրե - Անդրե

Արթուր - Արթիւր

Եդուարդ - Էդուարդ

Ժագ - Ժաք

Շահէն - Շահեն - Շահե

Փիլիպոս - Փիլիպպոս

Փոլատ - Փոլադ

Մամուլում և բառարաններում նկատելի են հատուկ անունների գուգաձևություններ⁸

Եղիսաբեթ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրութ, 1992)

Եղիսաբեթ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրութ, 1998)

Մարկոյ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրութ, 1992)

Մարկօ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրութ, 1998)

Մարոյ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրութ, 1992)

Մարօ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրութ, 1998)

Նարգիզ, Նարգիս («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրութ, 1992)

Նարկիս («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրութ, 1998)

Պերթի («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրութ, 1992)

Պերի («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրութ, 1998)

Ռաբէլ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրութ, 1992)

Ռաբէլ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրութ, 1998)

⁸ Բառարաններում նկատված երկակիության օրինակները մեզ տրամադրել է սիրիահայ Հ. Մարաշլյանը:

- Սոնա («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992, «Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Սօնա («Գործնական Բառարան», Երեւան, 2010)
- Վարդիթեր («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992)
վարդիթետ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Վերոնիկէ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992)
Վերոնիքա («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Ալպէր - «Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992
Ալպէր («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Արեգ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992) -
Արեգ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998) - Արեգ («Գործնական Բառարան», Երեւան, 2010)
- Արմէն - «Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992, «Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998
- Արմէն - «Գործնական Բառարան», Երեւան, 2010
- Մելիքսեթեկ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992) -
Մելիքսեդեկ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Յաբէթ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992) -
Յաբէթ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Յարոյ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992) -
Յարօ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998) - Յարօ («Գործնական Բառարան», Երեւան, 2010)
- Նիկոլ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992, «Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Նիկօլ («Գործնական Բառարան», Երեւան, 2010)
- Շարայ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992) -
Շարա («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)
- Սաղաթիլ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992) -
Սաղաթէլ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)

Մերձ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992) -

Մերժ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998) ճ-ով մի անգամ
Գանձասարում

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում **դարձվածային միավորները**:
Սիրիահայերի դարձվածային արտահայտություններում նկատելի են
տարբերություններ գրական արևելահայերենի համեմատությամբ:

Այստեղ քննել ենք սինեկդոխիկ դարձվածքներ, որոնք հիմնականում
կազմվում են մարմնի մասերի անվանումներից:

Հազարավոր սինեկդոխիկ դարձվածքներ են ստեղծվել *աչք, ալկանջ, բերան,
սիրտ, քիթ, ոտք, ձեռք* բաղադրիչներով:

Սիրիայի արևմտահայերենում մարմնի մասերի անվանումներով կազմված
դարձվածքներն ունեն տարբերակիչ հատկանիշներ, որոնք կարելի է բաժանել
հետևյալ խմբերի.

ա) դարձվածային միավորներ, որոնք երկու տարբերակում էլ՝ թե՛
արևմտահայերենում և թե՛ արևելահայերենում ունեն նույն կամ մոտ իմաստը
(բաղադրիչ բառերի տարբերությամբ), ինչպես՝

աչքդ ելլէ - *աչքդ դուրս գա*,

աչքդ գոցես - *բանաս* - *աչքդ բացես-փակես*,

աչքին իյնալ - *աչքի ընկնել*, *աչքի զարնել*,

աչքերը ետեւ մնալ – *աչքը ճանապարհին մնալ*

սիրտը պարպել - *սիրտը դատարկել*,

սիրտը կոտտալ -*սիրտը կսկծալ*, *սիրտը մոմռալ*

ալկաները խածնել - *ատամները կծել*, *ատամները սեղմել*,

քիթն անդին չտեսնել - *քթից այն կողմ չտեսնել*,

ձեռքը չերթալ - *ձեռքը չզնալ*⁹:

⁹ Արևմտահայ դարձվածքների օրինակները ճշտված են **Պ. Բեդիրյանի** «Հայերեն դարձվածքների
ընդարձակ բացատրական բառարանի» դարձվածքների հետ (տե՛ս գրականության ցանկը):

բ) Յուրօրինակ դարձվածային միավորներ, որոնք միայն արևմտահայերենում են գործածվում, սակայն դրանց մի մասը արևելահայերենում գործածվում են հոմանիշ կամ այլ ձևերով: Դարձվածքներ, որոնք խոսքը դարձնելով պատկերավոր՝ ստեղծում են հաղորդակցման իրավիճակի, միջավայրի որոշակի երանգավորում. դրանցում արտահայտվում է այդ լեզուն կրող ժողովրդի պատմությունը, աշխարհընկալումը: Ինչպես՝

աչք առնել - նկատի ունենալ

աչքե անցրնել - հայացք գցել

աչքը անուշցնել - հաճելի երևալ

աչքը ունքը կը խաղայ - հրապուրիչ շարժումներ ունենալ

աչքին գալ - նկատվել, երևալ,

աչքին չառնել - բանի տեղ չդնել

ականջե ականջ անցնիլ – մեկը մյուսին (գաղտնի) լուր տալ

ականջեն կախուիլ - ձանձրացնել, ականջին թթվել

ականջ տալ - ականջ դնել,

ակոռայեն կտրել - խնայողություն անել, բերանից կտրել

մեկուն քիթեն-բերնեն գալ - քթից գալ

մեկը ոտքեն գլուխը լուալ՝ օծել - սաստիկ հանդիմանել

ձեռքե ելլել – կորչել, ձեռքից գնալ

սիրտը գեշ ըլլալ - վատ զգալ

քիթը փրթիլ - գարշահոտությունից նեղվել

քիթին չդնել – չհավանել, բանի տեղ չդնել

քիթ քթի ըլլալ - դեմ առ դեմ հանդիպել,

քիթ բերան ընել – դժգոհել, մուրթ անել

Արևմտահայերենը չէր կարող գերծ մնալ օտար լեզուների ազդեցությունից: Միրիայի արևմտահայերենի ժողովրդախոսակցական տարբերակում առկա է արաբերենի ազդեցությունը: Միրիահայերը գործածում են արաբերենից բառացի պատճենված դարձվածքներ, ինչպես՝

Գլխուն վրայ փետուր ըլլալ. այսինքն՝ ինչ-որ բանով մեկը տարբեր է մյուսներից: Օրինակ՝ «Ինչո՞ւ իրեն պիտի ընդունինք, իսկ միւսներուն՝ ոչ, գլխուն վրայ փետո՞ւր կայ»: Կամ՝ «Գլխուն վրայ փետո՞ւր կայ, որ հետը ուրիշ ձեւով վարուինք»: Այս դարձվածքը, որն արտահայտում է ընտրյալ, արտոնյալ լինելը, իր հոմանիշն ունի հայերենում՝ «վերին արտի ցորենը լինել»:

Մամային/պապային ելեր է (طاعة لأهل) (ինչ որ բաներով մօրը/հօրը նման լինել): Այս դարձվածքը հոմանիշ է արևելահայերեն «մամային, կամ պապային է քաշել» դարձվածքին: Ինչպես՝ «Խելացի եւ գեղեցիկ աղջիկ է, մամային ելեր է» (մամային է քաշել): Արաբերենից պատճենված այս դարձվածքը բավականին տարածված է սիրիահայերի մոտ:

Պարապի բան մը ընել (խօսիլ, աշխատիլ) (لا تحكي على الغاضي (عل فاضي)). զուր խոսել, անարդյունք աշխատել: Օրինակ՝ Պարապի կը փորձես զինք համոզել, զէթունցի է: Կամ՝ Պարապի մինչեւ Երուսաղէմ գնաց, խելքը չմեծցավ:

Վրան նայիլ. արաբերենից պատճենված այս դարձվածքի արևմտահայերեն հոմանիշն է «վրան նստել», այսինքն՝ արժենալ: Ինչպես՝ «Վրադ քանիի՞ նայեցաւ այս ժամացոյցին նորոգութիւնը»: Կամ «Տունին կահ-կարասին փոխելը քանիի՞ կը նայի»:

Մուսաննա Տիոյան
Արևմտահայերենի բաժնի
ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ.

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ

(ըստ սիրիահայ հայրենակիցների վկայությունների)

Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում հայրենագիտության մեջ ձեռք է բերել որոշակի հրատապություն:

Արևմտահայերենը իր բնօրրանից՝ Պոլսից դուրս գալով, տարբեր երկրներում, բազում գաղթօջախներում է գործառությունն սկսել, մի կողմից՝ պահպանելով սեփական գրական լեզուն (այլև բարբառային առանձնահատկությունները), մյուս կողմից՝ կրելով օտար լեզվական միջավայրի ազդեցությունը:

Այսօր վստահաբար կարող ենք փաստել, այդ ազդեցությունը իր հետքն է թողել ոչ միայն բուն լեզվական կարգերում (բառապաշար, հոլովման ու խոնարհման համակարգեր, շարահյուսություն), այլև արևմտահայերի լեզվամտածողության վրա:

Հայաստանում համագործակցելով Սիրիայից Հայաստան ներգաղթած մեր հայրենակիցների հետ՝ փորձել ենք բացահայտել նշված համայնքի արևմտահայերենի առկա առանձնահատկությունները՝ ձեռքի տակ ունենալով համեմատության եզրեր. մի կողմից՝ դոկտ. Հիլտա Գալֆայան-Փանոսյանի Արևմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկը¹⁰ և մյուս կողմից՝ Յու. Ավետիսյանի Արևելահայերենի և Արևմտահայերենի զուգադրական քերականություն¹¹ դասընթացը և երրորդ կողմից՝ սիրիահայ մեր գործընկերների վկայությունները:

¹⁰ Դոկտ. Հիլտա Գալֆայան - Փանոսյան, *Արևմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ*, Ե., ԵՊՀ, 2009:

¹¹ Յու. Ա. Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն*, Ե., ԵՊՀ, 2007:

Աշխատանքի այս մասում անդրադարձել ենք հոլովման համակարգին. արևմտահայերենի հոլովման համակարգի զուգադրական քննությունը բերեց հետևյալ արդյունքների.

Արևմտահայերենում գոյականի հոլովական համակարգը բաղկացած է 6 հոլովներից՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական:

Արևմտահայերենը չունի արևելահայերենի պարագայում օգտագործվող ներգոյական հոլովը: Այս մասին Յու. Ավետիսյանը ահա թե ինչ է գրում. Արևմտահայերենում բացակայում է ներգոյական հոլովը: Մա բացատրվում է երկու գրականների բարբառային հիմքերով: Ներգոյականը՝ որպես առանձին հոլովաձև, առաջացավ լեզվի զարգացման հետզբառայան փուլում՝ արևելահայ բարբառներում. Այն արևմտահայերենում առանձին ձևավորում չունի: Այդ հոլովի իմաստը արևմտահայերենում արտահայտվում է երեք կերպ.

ա) սեռական-տրականի ձևով և *մեջ* կապով. արտահայտում է հիմնականում գործողության տեղի իմաստ. *Պարտեզին մեջ աղուոր վարդեր տեսած էի:*

բ) ուղղական-հայցականի ձևով. դարձյալ ցույց է տալիս գործողության կատարման տեղը՝ *Երևան հանդիպեցանք: Դպրոցը հանդիսություն մը կա:*

գ) առանձին ժամանականիշ կառույցներում արտահայտվում է ուղղակի սեռական-տրականի ձևով. Ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը՝ *Այս պարագային չեմ կրնար քեզի հետ խօսիլ*¹²:

Այս վերջին օրինակում (ժամանականիշ կառույցում) **պարագա** բառը, մեր սիրիահայ գործընկերոջ՝ Հարութ Մարաշյանի վկայմամբ, ժամանականիշ չէ. իր մեկ իմաստով այն նշանակում է՝ «ազգականներ, հարազատներ» (օրինակ՝ Մազլումյաններու ընտանիքը իր *պարագաներով* Ամերիկա տեղափոխվեցան), իսկ երկրորդ իմաստով՝ պայմաններ, վիճակ (օրինակ՝ *Այս պարագային ավելի ճիշտ կ'ըլլայ հիւանդին օգնել*):¹³

¹² **Յու. Ա. Ավետիսյան**, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն*, ԵՊՀ, Ե., 2007, էջ 56-57:

¹³ Այս մասին տ'ես նաև **Ա. Սարգսյան**, *Արևմտահայերենի բառարան*, էջ 258, **Ռ. Մաքսալետոյան**, *Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան*, էջ 305:

Վերը թվարկած կետերով է ներգոյական հոլովը ներկայացնում նաև Հ. Գալֆայանը¹⁴: Սակայն սիրահայերից մեր մյուս գործընկեր Բեթի Փանոսյանը վկայում է, որ իմաստային առումով՝ արևմտահայերենի մէջ ներգոյական հոլովը իր ճշգրիտ արտայայտությունը ստանում է հետևեալ ձևերով.

Օրինակ՝

Աշակերտները դպրոցում կազմակերպեցին աշնանային հանդես նախադասությունը ունի հետևյալ դրսևորումները՝

1. Մեռական հոլովով եւ մէջ կապով՝

Աշակերտները դպրոցին մէջ կազմակերպեցին աշնանային հանդես:

Ներգոյականի նշված կառույցը հաճախական է նաև գրական գրավոր խոսքում՝

Նախագահ Ասատ նշեց, որ ներկայիս Սուրիոյ մէջ գործածուող զանգուածային քանդումի իսկական զէնքերը ծայրայեղականնութիւնն ու ահաբեկչութիւնն են (Գանձասար. com), այլն՝ քաղաքին մէջ կացութիւնը պիտի շրջէ ի նպաստ իրեն ... , Փրոսոք իր բողոքագիրին մէջ զգուշացուցած է, որ ... (տե՛ս նույն տեղը):

2. Բացառական հոլովով և ներս կապով՝

Աշակերտները դպրոցէն ներս կազմակերպեցին աշնանային հանդես:

Իսկ երբեմն հայցական հոլովով ինչպէս՝

Մեծ հայրիկը ապրում է գիւղում նախադասությունը կստանա հետևյալ արտահայտությունը՝

Մեծ հայրիկը գիւղ կ'ապրի: (հայցական հոլով + 0 հոդ)

Մեծ հայրիկը գիւղն է: (հայցական հոլով + որոշյալ հոդ)

Այսպիսով, Սիրիայում արևտահայերենը ներգոյական հոլովի մի հավելյալ դրսևորում էլ ունի՝ բացառական հոլովով + **ներս** կապը:

Երկիրէն ներս ընթացիկ տարուան աշնան կանխատեսուող նախագահական ընտրութիւններուն ընդառաջ ... իշխանութիւնները որոշած են զօրահանդէս կազմակերպել (Գանձասար. com):

(**ներս** կապով կառույցները բանավոր խոսքում մեծ տարածում չունեն կամ դրան բնորոշ չեն):

¹⁴ **Դոկտ. Հիլտա Գալֆայան - Փանոսեան, Արևմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ, 2009: էջ 33):**

Հոլովումների տեսակները արևմտահայերենում.

Գոյականները, նախադասության մեջ իրենց գործածության և դերին համապատասխան, պատկանում են հոլովական հետևյալ խմբերից մեկին կամ երկուսին.

Ի, ան, ուան, եան, ոջ, օ, ո, ու (ոյ)

Ի հոլովում

Մեծ է այն գոյականների թիվը, որոնք **ի** հոլովման են պատկանում (ինչպես և արևելահայերենում):

Պարտեզ, երեխայ (երախայ) բառերի թեք ձևերը (նաև հոգնակի թվով) հետևյալներն են՝

Ուղղական - Հայցական. **պարտեզ-պարտեզներ, երեխայ-երեխաներ** (երախայ-երախաներ)

Սեռական - Տրական. **պարտեզի - պարտեզներու, երեխայի - երեխաներու** (երախայի(ն)-երախաներու(ն))

Բացառական. **պարտեզե-պարտեզներե, երեխայե- երեխաներե** (երախայե-երախաներե)

Գործիական. **պարտեզով-պարտեզներով, երեխայով-երեխաներով** (երախայով-երախաներով):

Նույն ձևով են հոլովվում **դպրոց, սեղան, գինի, թռչուն, անիւ, կեռաս, ծառ, օձառ, մատիտ, աչք, արքայ** (թագաւոր – գործածական ձևն է. այն կիրառվում է **արքայի** փոխարեն), **ուսուցիչ** և բազմաթիվ այլ գոյականներ:

Վերը հիշատակվածին համաձայն՝ գոյականներ էլ կան, որոնք միաժամանակ կարող են պատկանել մեկից ավելի հոլովումների (այսինքն՝ զուգահեռ ձևեր ունեն, ինչպես՝ **հոգի - հոգիի / հոգւոյն, պատիւ – պատիւի / պատուի / պատուոյ (պատտուոյ)**: Օրինակներ՝ **պատիւի համար, պատուի կաց, պատուոյ ցանկ, պատուոյ (պատտուոյ) շքանշան, թիւ- թիւի / թւոյն, ըստ որում՝ թւոյն** տարաբերակը վերապահվում է գրական խոսքին, օրինակ՝

Հանդէսի 9րդ թիւին մէջ Շահնուրին մէկ կարեւոր յօդուածը պիտի գտնես:

Տարի- տարիի / տարւոյն / տարուան, օրինակներն են՝ *Տարիի մը չափ թուեցաւ:*

Ընթացիկ տարւոյն առաջին ամիսը: Տարուան ընթացքին:

շուն - շունի / շան. շան սատակ

տուն - տունի / տան. տան անդամ (Աստղիկը մեր տունին անդամներէն է), տան տէր (տանտէր) (տունի տէր մարդ է),

արին - արինի / արեան

արեան ծով, արեան շիթ (հիւանդը արինի պէտք ունի)

հով - հովի / հովու

հովու նման (հովի նման). ծով - ծովի / ծովու, ծովու մակերես

արեւ - արեւի / արեւու. արեւու շող

Նշված գուգաձևություններից **ծովի, արևի, հովի** և մյուս ձևերը՝ դրանց նմանողությամբ, աստիճանաբար նախընտրելի են դառնում արևմտահայերենում՝ արևելահայերենի ազդեցությամբ (ինչպես վկայում են մեր գործընկերները):

Մուկ - մուկի / մկան. մկան թոյն

մանուկ - մանուկի / մանկան. մանկան տուն

ձուկ-ձուկի / ձկան. ձկան իւղ, ձկան միս

Տուն, դուռ, լեռ, մատուռ գոյականները կարելի է օգտագործել **տունի** կամ՝ **տան, դուռի** կամ՝ **դրան, լեռի** կամ՝ **լեռան, մատուռին** կամ՝ **մատրան** տարբերակներով: Երկու ձևերն էլ հավասարապես օգտագործվում են թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում:

Օրինակներ՝

Յրդ յարկի Չրդ դուռին (դրան) վրայ զարդեր կախուած պիտի տեսնես:

Այդ դուռը մեր տունին (տան) դուռն է:

Բանավոր խոսքում լայն տարածում են գտել վերոհիշյալ օրինակների **ի** հոլովաձևերի տարբերակները:

Հոգւոյն, պատույ, թւոյն, արեան, մանկան, մատրան ձևերը վերապահվում են գրական խոսքին: Օրինակներ՝

Հրաւիրուածներու պատույ ցանկին Թաշճեան ամուլի անուններն ալ աւելցնելու էին:

Երիտասարդներուն մէջ արեան կանչը այնքան զօրաւոր էր, որ ամէն բան ձգած՝ վերադարձան:

Վաղաժամ ծնած մանկան հոգատարութիւնը մասնագէտներուն վերապահելու ենք:

Ան հոլովում

Ան հոլովմանն են պատկանում տարվա եղանակներ ցույց տվող բառերը.

ձմեռ - ձմրան - ձմեռե՛ - ձմեռով

ամառ - ամրան - ամառե՛ - ամառով

աշուն - աշնան - աշունե՛ - աշունով

գարուն - գարնան - գարունե՛ - գարունով

Նան՝

մատուռ - մատրան - մատուռե՛ - մատուռով

Եվ նոյնպես՝ *ծոռ - ծորան (թոռնորդի), թոռ - թորան (թոռան) (թոռնիկ բառը ավելի գործածական է, քան թոռը), բեռ - բերան, լեռ - լերան, դուռ - դրան:*

Վերոնշյալ *ռ-ը* հնչյունափոխությունը բացատրվում է *ռ-ից ն-ի* հեռացումով՝ նկատի ունենալով, որ այս բառերի արմատական նախնական ձևը եղել է *ձմեռն, ամառն, ծոռն, թոռն, բեռն, լեռն:* Հետևաբար, հոլովման ժամանակ, երբ տեղի է ունենում *ռ-ից ն-ի* հեռացումը, գրվում են՝ *ձմրան, թորան, լերան, դրան* և այլն:

Օրինակներ՝

Դրան գանգը սթափեցուց իր մտքերուն մեջ մոլորած Արմենը:

Լերան գագաթը հասնիլը միշտ ալ զօրաւոր կամք, համբերութիւն ու քիչ մըն ալ յամառութիւն կ'ուզէ:

Ձմրան կէսին այդ կողմերը երթալը իսելացի բան չէ:

Ուան հոլովում

Օրվա տարբեր (օրուան մեջ) ժամանակահատվածներ ցույց տվող բառերը առավելապես պատկանում են *ուան* հոլովմանը.

իրիկուն-իրիկուան-իրիկուրնե՛-իրիկունե՛, առտու-առտուան-առտուրնե՛-առտուե՛,

կէսօր-կէսօրուան-կէսօրուրնե՛/կէսօրե՛, գիշեր-գիշերուան-գիշերուրնե՛/գիշերե՛. ով

հոլովակազմիչով ձևերը՝ իրիկունով, առտուով, կէսօրով, գիշերով, գործածական չեն ո՛չ խոսակցական, ո՛չ էլ գրական լեզվում:

Գիշերուրնե՛ մինչեւ առաւօտ գիրք կը կարդար:

Գիշերե՛ գիշեր կ'այցելէր հիւանդ մօրը:

Ինչպես նաև՝

Շաբաթ-շաբթուան-շաբաթե-շաբաթով, տարի-տարիի / տարուան / տարւոյն-տարիե-տարիով, ամիս-ամսուան-ամիսե-ամիսով, օր-օրուան-օրուրնե / օրե-օրով, ժամ-ամուան-ժամե-ժամով:

Եան հոլովում

-*Ութին* վերջածանցով բոլոր բառերը պատկանում են *եան* հոլովմանը: Օրինակ՝ *ուրախութիւն-ուրախութեան-ուրախութենե-ուրախութիւնով/ուրախութեամբ, քաջութիւն-քաջութեան-քաջութենե-քաջութիւնով / քաջութեամբ.*

նույնպէս՝ *տիրութիւն, գեղեցկութիւն, ցանկութիւն, ընկերութիւն* և այլն:

Գործիական հոլովի *եամբ* հոլովակերտ մասնիկը գործածվում է թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում: Օրինակներ՝

Կազմի սակերու բարձրացման առնչութեամբ հանրային դժգոհութիւն արտայայտող անձիք եւ կողմեր գտնուեցան ...

Հայրենի մեր քաղաքական գործիչները, աշխոյժ գործունէութեամբ աչքի ինկող խորհրդարանականները իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցած են ... բազում հարցերու վրայ:

Նան՝

Առաւօտ-առաւօտեան-առաւօտե-առաւօտով, երեկոյ-երեկոյեան-երեկոյե-երեկոյով, արիւն-արեան-արիւնե-արիւնով կամ՝ արեամբ:

Արեամբ տարբերակը գործածվում է գրական խօսքում, օրինակ՝

Իրենց արեամբ ազատագրեցին գրաւեալ հողը:

Ոջ հոլովում

Ամուսնական եւ ազգակցական կապեր ցոյց տվող հետևյալ բառերը ստանում են *ոջ* հոլովակերտ մասնիկը՝

կին, տալ, աներ, կեսուր, տագր, քոյր, հօրաքոյր, մօրաքոյր, տիկին, ներ, տէր, ընկեր.

կին-կնոջ-կնոջմե-կնոջմով, տալ-տալոջ, աներ-աներոջ, կեսուր-կեսարոջ, տագր-տագրո, քոյր-քրոջ, հօրաքոյր-հօրաքրոջ, մօրաքոյր-մօրաքրոջ, տիկին-տիկնոջ, ներ-ներոջ, տէր-տիրոջ, ընկեր-ընկերոջ:

Օ հոլովում

Սերտ ազգակցական կապեր ցույց տվող բառերը ստանում են **օ** հոլովակերտ մասնիկը, ինչպես՝ *հայր-հոր-հորմէ - հորմով կամ հայրով, մայր-մոր-մորմէ-մորմով կամ մայրով, եղբայր-եղբոր-եղբորմէ-եղբորմով, հորեղբայր, մորեղբայր, կնքահայր:*

Ոյ հոլովում

Գոյություն ունեն բառեր էլ, որոնք զուգահեռ գործածությամբ ստանում են **ի** և **ոյ** հոլովակերտ մասնիկները:

Մամուլ-մամուլի կամ *մամլոյ*, օր.՝ *մամուլի աշխատակից*, բայց՝ *մամլոյ արձակուրդ պատիւ - պատիւի* կամ՝ *պատուոյ*, օր.՝ *պատիւի համար, պատուոյ գիր սուգ - սուգի* կամ՝ *սգոյ*, օր.՝ *սուգի տուն*, *սգոյ տօն*, *սգոյ յիշատակ*

Մի շարք տեղանուններ, որոնք ունին **իա** վերջավորությունը՝ *Սուրիա-Սուրիոյ, Բտալիա-Բտալիոյ, Կարին-Կարնոյ, Մուշ-Մշոյ, Մասուն-Մասնոյ, Պոլիս-Պոլսոյ: Նան՝ սէր-սիրոյ-սէրէ-սիրով, աստուած-աստուծոյ-աստուծմէ-աստուծմով:*

Ու հոլովում

Հոլովման այս խմբին են պատկանում միավանկ մի շարք բառեր, ինչպես՝ *հայ, մարդ, մանչ, արջ, պահ, դար, ձի, շահ, կով, հաւ, նաւ, հով, գահ, ծով* -> հայու, մարդու, մանչու, արջու, պահու, դարու, ձիու, շահու, կովու, հաւու, նաւու, հովու, գահու, ծովու: Օրինակ՝

Ծովուն խորքը աւելի հետաքրքրական է քան մակերեսը:

Կան նաև մի քանի բազմավանկ բառեր, ինչպես՝ *տղայ, ճամբայ, արեւ, գլուխ* -> տղու, ճամբու, արեւու, գլխու:

Օրինակներ՝

Ճամբու եզրին կեցած երեք ինքնաշարժները Տիգրանի ուշադրութիւնը գրաւեցին:

Գլխուդ փորձանք եղաւ ձեռնարկածդ նոր ծրագիրը:

Գահ, հով, ծով, արեւ, գլուխ բառերը կը ստանան նաեւ **ի** հոլովակերտ մասնիկը՝ *գահի, հովի, ծովի, արեւի, գլուխի:*

Օրինակ՝ **Շովին** անսահմանությունը միշտ ալ յուզած է բանաստեղծին երեւակայությունը:

Այլաձև հոլովումներ

Կայսր, աստղ, դուստր գոյականները, որոնք սեռական - տրական հոլովում, որպէս գրաբարից մնացած ձևեր, օգտագործվում են նաև հետևյալ ձևով՝ **կայսրի** կամ **կայսեր, աստղի** կամ **աստեղ, դուստրի** կամ **դստեր**:

Ընդգծված տարբերակները հանդիպում են առավելաբար արևմտահայերեն գրական լեզվում: Օրինակ՝

Ծնողքին շարունակական քաջալերանքը մեծ դեր ունեցան դստեր յաջողություններուն մէջ:

Մի շարք բառերի դեպքում գործածական են նաև գրաբարյան հոլովաձևերը՝

անուն - անունի կամ **անուան,**

ծնունդ - ծնունդի կամ **ծննդեան,**

գալուստ - գալուստի կամ **գալստեան:**

Օրինակ՝

Կազմակերպութեան նոր անուան ընտրությունը կապուած էր անոր գործունէութեան նոր եւ աւելի ընդարձակ միտումներով:

Գրաբարյան այլ հոլովաձևեր էլ գործածվում են որոշ բառակապակցությունների հետ, ինչպէս՝ **Բագրատունեաց թագաւորութիւն, Վրաց իշխան, Վարդանանց տօնակատարութիւն, նախնեաց աւանդութիւն, հարսանեաց հրաւեր, չարեաց փոքրագոյն, Հնդկաց ծով, Պարսից ծոց, Արքայից արքայ, կենաց ծառ, Ծննդոց գիր, Հայոց, պատմութիւն, Սրբոց դաս, Սեւանայ լիճ:**

Բառեր էլ կան, որոնք գործածվում են գրաբարի գործիական հոլովաձևերով՝

ատեն-ատենի-ատենէ-ատենօք,

ընտանիք-ընտանիքի-ընտանիքէ-ընտանիքով կամ **ընտանեօք:**

ընտանեօք արտահայտությունը տարածված է նաև բանավոր խոսքում.

ինչպէս՝ **ընտանեօք ճամբորդեցինք, ընտանեօք սեղան նստեցանք:**

ցաւ-ցաւի-ցաւէ-ցաւով կամ **ցաւօք**

Ցաւօք ձեր ընդհանարապէս գործածվում է կապակցությունների հետ.

Օրինակ՝ **Ցաւօք սրտի ձեր դիմումը մերժուած է:**

Յարգանք - յարգանքի - յարգանքէ - **յարգանքով կամ յարգանօք** (որը գործածվում է պաշտոնական նամակագրության մեջ):

Արևմտահայերենի խոնարհման համակարգը

(ըստ դոկտ. Հիլտա Գալֆայեան - Փանոսեանի, Արևմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկի և սիրիահայ Հարութ Մարաշլյանի վկայության)

Բայը գոյականի և դերանվան նման թեքվող բառ է: այն ունի արմատ (**հիմք**) և վերջավորություն. արմատը (**հիմքը**) մնում է անփոփոխ (ինչպես՝ **երգ** - ել, **վառ** - իլ, **երթ** - ալ), իսկ վերջավորության փոփոխությունները բխում են բայի եղանակից, ժամանակից, դեմքից ու թվից: Միակ բայը, որ միայն արմատից է բաղկացել, էական բայն է՝ «է»:

Բայի դեմքն ու թիվը

Բայն ունի եզակի և հոգնակի թիվ. այն և՛ եզակիում և՛ հոգնակիում ունի երեք դեմք՝

եզակի	հոգնակի
Ա. դեմք՝ տեսայ	տեսանք
Բ. դեմք՝ տեսար	տեսաք
Գ. դեմք՝ տեսաւ	տեսան

Բայի երեք ժամանակներն են՝ **ներկա, անցյալ, ապառնի:**

Ներկան ցույց է տալիս գործողության կամ վիճակի ներկա ժամանակի ընթացքում կատարումը: Օրինակ՝ «Կու գամ»: **Արևմտահայ խոսակցական լեզուն** ներկա ժամանակի վերջում երբեմն ավելացնում է՝ «կոր» մասնիկը՝ «Կու գամ կոր» ձևով, որ անմիջական ներկա է առաջ բերում, այսինքն՝ «Ճիշդ հիմա գալիս եմ, գալու ընթացքի մեջ եմ»: Այս «կոր» մասնիկը, ըստ Հ. Գալֆայանի, համապատասխանում է անգլերենի մեջ շատ գործածական «ing»-ին (I am coming), որ սակայն հակադրաբար անգլերենի, չի ընդունված արևմտահայ **գրական** լեզվի մեջ:

Այս մասին Յու. Ավետիսյանը գրում է. «Արևմտահայ խոսակցական լեզվում շարունակական ներկայի իմաստը արտահայտվում է նաև **կոր** մասնիկով՝ **կը խօսիմ կոր, կ'երթամ կոր** ևն: Այդ մասնիկը բարբառի միջոցով հայերենին է անցել թուրքերենից և հանդիպում է մի քանի փոքրասիական բարբառներում՝ Սեբաստիա, Զմյուռնիա, Ռոդոսթո ևն: **Կոր** մասնիկի վերաբերյալ Հովհ. Գազանճյանը գրում է. «**Կոր** մասնիկը որ սահմանական ներկայի և անկատար ձևերուն յետադասուելով բուն ներկայ շինելու կը ծառայէ, օրինակ՝ **կ'երթամ կոր, կը խօսէի կոր** ևն, և երբեմնի առանց **կը**-ի, երբոր բառը բաղաձայնով կ'սկսի, ինչպէս՝ **գրեմ կոր, կարդայի կոր** ևն: Այս **կոր**-ը փոխառութիւն է թուրքերէնէ, որուն ներկայակերտ **յոր**-ին հայացած ձևն է. Օրինակ՝ **կիտի յոր = կ'երթայ կոր** ևն: **Կոր**ի գործածումը աւելի յատուկ է խօսուած լեզուին և քիչ անգամ կը կիրարկուի գրական լեզուի մեջ: Բայց պէտք չէ խուսափիլ գործածելէ երբ իմաստի պայծառութեան յարկը կը պահանջէ որ գործածուի: Արդի գրական արևմտահայերենի գրավոր տարբերակում այդ մասնիկը չի գործածվում: Հանդիպող օրինակները ոճական կիրառություններ են և գերազանցապէս հերոսների խոսքում են. Օրինակ՝ «Ինտոր կ'ըլլայ, որ չես ճանչնար կոր պզտիկս», «Չէ՛մ յիշեր կոր, Կոստան, մեղքցիր ինձի, ես իմ «Հայր մեր»-ս չեմ յիշեր կոր» (Շ. Շահնուր)¹⁵:

Կոր - ի մասին միանգամայն այլ տեսակետ ունի Պ. Բեդիրյանը. «Այս մասնիկի գործածությունը կատարյալ «վարակ» է արևմտահայ խոսակցական լեզվի մեջ, և հնուց է գալիս: **Կոր** – ին շատ ենք հանդիպում Հակոբ Պարոնյանի գրվածքներում, որը սիրում է իր հերոսներին խոսեցնել պոլսահայ խոսակցական լեզվով.

-Վազ անցայ, պապամ, հոգիս ցաւեցաւ, երեսս կրակի պէս կ'այրի **կոր**: - Բարկացած կ'երեւաք **կոր**, ասոր համար չեմ ուզեր պատասխանել ...: Ի՞նչպէս քելեմ, ճանըմ, նասըրներս կը ցաւին **կոր** ...:

Նույնիսկ մանրավեպ է հորինվել մի ուսուցչի մասին, որը սիրում էր կրկնել.

-Սա **կոր**-ը մի՛ գործածեք, կ'ըսեմ **կոր** ...

Արդ՝ ո՞րն է սխալի բուն պատճառը: Ինչո՞ւ այդ «չարաբաստիկ» **կոր**-ը դեռ չի մոռացվել:

Անգլերենը ներկայի (Present Tense) երկու ձևեր ունի, որոնք իրենց իմաստով հստակ տարբերվում են. դրա համար էլ I go և I am going ձևերը նույնը չեն: Այսպես չէ

¹⁵ Յու. Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի քերականություն*, ԵՊՀ հրատ., 2007թ., էջ 173:

սակայն հայերենում: 'ատերին թվում է, թե բայի մոտ **կոր** դնելով շարունակականի (continuous) իմաստ են հաղորդում բայի ներկայի և անցյալ անկատարի (Past continuous) ձևերին: Իբր թե կ'երթամ - ը | ցո-ն է, իսկ **կ'երթամ կոր-ը**՝ I am going-ը : Հատկապես նրանք, որ քիչ թե շատ ծանոթ են արևելահայերենին, կարծում են, թե **գնում եմ** -ը ճիշտ I am going-ն է, ինչու՞ հապա արևմտահայերենում էլ **կոր-ը** չասվի:

Իրողությունն այն է,- շարունակում է հարգարժան պրոֆեսորը, որ հայերենը, արևմտահայերեն թե արևելահայերեն, շարունակականի քերականական կարգի մասնավոր կամ հատուկ ձև չունի: Նրա ներկան թե Present Tense-ի, թե Present continuous-ի իմաստները կարող է արտահայտել: «Տուն կ'երթամ ու քիչ մը կը հանգչիմ» նախադասությունը թարգմանվում է՝ I go home and rest a bit, իսկ «Հիմա տուն կ'երթամ», «Ահավասիկ կը հանգչիմ»՝ I am going home now, I am (just) having a rest:

Հույսով եմ, նշմարելի է, որ երբ ուզում եք հատկապես շեշտել շարունակականությունը, դարձյալ **կոր**-ի կարիքը չունեք. Ուրիշ միջոցներ կան՝

Ճիշտ հիմա հոնկէ կու գամ: **Ահաւասիկ** կը գրեմ: Նամակս վերջացնելու **վրայ եմ**: Այդ ժամերուն **սովորաբար** տունը կ'ըլլամ:

Այնպես որ, ես էլ, մանրավեպի մեջ հիշատակված ուսուցչի նման, նույն կոչը պիտի ուղղեմ ձեզ, միայն թե առանց վերջին բառի՝

-Սա կոր-ը մի՛ ըսեք, կ'ըսեմ ձեզի¹⁶:

Սուրիոյ արևմտահայերենը Պետրոս Պետիրեանի թելադրանքներուն կը հետևի եւ բացառութիւններ չունի: Օրինակ՝

Մայրս կերակուր կ'եփէ:

Միայ կը նկատուի «մայրս կերակուր կ'եփէ կոր» ձևը:

Նոյնպէս ճիշդ կ'ըլլայ՝ «**Աշակերտները իրենց դասերը կը սերտեն**», եւ ոչ թէ «Աշակերտները իրենց դասերը կը սերտեն կոր»:

Անցյալ ժամանակը երկու ձև ունի՝

ա) անկատար անցյալ (օրինակ՝ կը խօսէի),

բ) կատարյալ անցյալ (օրինակ՝ խօսեցայ):

¹⁶ **Պետրոս Պետիրեան**, Եկեք ճիշդ խօսինք ու գրենք, Օժանդակ ձեռնարկ, Պոստոն, Մեւ. , Պայքար, 1993, էջ 117-118:

Ապառնին ևս ունի երկու ձև՝

ա) բացարձակ ապառնի (օրինակ՝ պիտի խօսիմ)

բ) անկատար ապառնի (օրինակ՝ պիտի խօսեի):

Արևմտահայերենում բայն ունի չորս եղանակ՝ **սահմանական, հրամայական, ըղձական և անորոշ** (որը կոչվում է նաև դերբայ՝ իր վեց ձևերով):

Սահմանական եղանակը ներկայացնում է դեմքով ու թվով արտահայտվող բայի **ներկա, անկատար անցյալ, ապառնի և անցյալի ապառնի** ժամանակները, որոնք կոչվում են բայի պարզ ժամանակներ և բայի դիմավոր ձևեր: Իսկ դերբայները անդեմ ձևեր են, ծառայում են բայի բաղադրյալ ժամանականեր կազմելուն:

Ներկա և անկատար անցյալ ժամանակներում բաղաձայնով սկսվող բազմավանկ բայերը ստանում են «կը» նախադաս մասնիկը, որն անփոփոխ է մնում չորս լծորդությունների պարագայում՝

կը գրեմ – կը գրեի

կը խօսիմ – կը խօսեի

կը խաղամ – կը խաղայի

կը թողում – կը թողուի

Ձայնավորով սկսվող բայերի պարագայում «կը» մասնիկը կորցնում է իր «ը»-ն և դառնում է «կ'».

կ'ուտեմ – կ'ուտեի

կ'աղամ – կ'աղայի

կ'երգեմ – կ'երգեի

կ'օգնեմ – կ'օգնեի

կ'իյնամ – կ'իյնայի

կ'ուզեմ – կ'ուզեի

Այս ապաթարցի նշանը դնում ենք նաև սահմանական ներկայի եզակի Գ դեմքի ձայնավորով սկսվող ժխտական ձևի բայերի պարագայում միայն, ուր գրում ենք «չ'» փոխանակ գրելու «չի», օրինակ՝

Այդ տղան չ'ազատիր այդ հիւանդութենէն:

Այս գնացքը (շոգեկառքը) մինչեւ Իտալիա չ'երթար:

Այս երեխան (պզտիկը) ինչու՞ միս չ'ուտեր (միս ինչու՞ չ'ուտեր):

Նշված նշանը դրվում է նաև բանաստեղծության մեջ՝ մեկ վանկ շահելու նպատակով, երբ ձայնավորով սկսվող բառերից առաջ «մը» կամ «կըն» գրելու փոխարեն «մ'» ենք գրում. Օրինակ՝

Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից:

Երեք միավանկ բառեր՝ լալ, գալ, տալ, «կը» - ի փոխարեն ստանում են «կու» նախադաս մասնիկը, որը բայից անջատ է գրվում՝

կու լամ – կու լայի

կու գամ – կու գայի

կու տամ – կու տայի:

Կատարյալ անցյալ ժամանակը հայոց լեզվի երկու ճյուղերի մեջ էլ մեծ տարբերություններ ունի. այն ամենաբարդ ժամանակն է նույնիսկ արևմտահայի համար, քանի որ խոնարհման կերպերը տարբերվում են, նայած թե բայը կանոնավոր է, թե անկանոն, միջածանց ունի՞, թե ոչ և ո՞ր միջածանցն է խնդրո առարկան:

Կատարյալ անցյալի կազմության ընդհանուր պատկերը հետևյալն է՝

Ա) ա) բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին

բ) իջայ, իջար, իջաւ, իջանք, իջաք, իջան

Բ) ա) գրեցի, գրեցիր, գրեց, գրեցինք, գրեցիք, գրեցին

բ) խաղացի, խաղացիր, խաղաց, խաղացինք, խաղացիք, խաղացին

գ) հարցուցի, հարցուցիր, հարցուց, հարցուցինք, հարցուցիք, հարցուցին

դ) խօսեցայ, խօսեցար, խօսեցաւ, խօսեցանք, խօսեցաք, խօսեցան

ե) գիտցայ, գիտցար, գիտցաւ, գիտցանք, գիտցաք, գիտցան

Հրամայական եղանակն ունի միայն եզակի և հոգնակի երկրորդ դեմքի ձևեր՝ *գնա՛, գացե՛ք:*

Ըղձական եղանակի ձևն է՝ «երանի» երթայ:

Արևմտահայերենում դերբայները վեցն են՝

Անորոշ, որն ունի չորս տեսակի վերջավորություն՝ ել, իլ, ալ, ուլ (գրել, նայիլ, տաքնալ, զբոսնուլ): Գոյականաբար գործածվելիս հոլովվում է ու հոլովմամբ, իսկ -իլ- ի դեպքում՝ փոխվում է -ել-ի.

Քալելը օգտակար է:

Ես գիտեմ նուազել:

Խօսելու ժամը չէ:

Աշխատելէն յոգնեցայ:

Խաղալով կ'անցընէ իր ժամանակը:

Վաղակատար դերբայը (ըրեր) Ա և Բ լծորդության բայերի պարագայում կազմվում է անորոշ դերբայի հիմքի վրա **եր** ավելացնելով (գրեր, խօսեր), իսկ Գ լծորդության պարագայում **եր**-ը ավելանում է կատարյալ անցյալի հիմքի վրա (կարդացեր, խաղացեր): Այս դերբայն օգտագործվում է միայն օժանդակ բայի հետ և կազմում է՝

վաղակատար ժամանակ (**գրեր եմ**) և անցյալի վաղակատար ժամանակը (**գրեր էի, կարդացեր էի**):

Հարակատար դերբայը (ըրած) կազմվում է անորոշի հիմքին **ած** ավելացնելով (գրած, բերած), իսկ Գ լծորդության պարագայում կատարյալի հիմքի վրա **ած** ավելացնելով՝ կարդացած, խաղացած: Օժանդակ բայի հետ այս դերբայը կազմում է հարակատար (**գրած եմ, կարդացած եմ**) և անցյալի հարակատար ժամանակները (**գրած էի, կարդացած էի**):

Ենթակայական դերբայը (ընող) կարող է ինքնուրույն գործածվել գոյականաբար, հոդ ստանալ, գոյականի պաշտոններ ստանձնել՝

Աշխատողը կ'ուտէ:

Հասկցողին շատ բարեւ:

Ուտողէն մի՛ վախնար:

Ապառնի դերբայը կազմվում է անորոշի վրա **ու** ավելացնելով՝ **բերելու, կարդալու** և օժանդակ բայի հետ կազմում է բաղադրյալ ապառնի (**բերելու եմ, կարդալու ես**) և անցյալի բաղադրյալ ապառնի ժամանակները (**գրելու էի, պարելու էի**): Անորոշ դերբայի վրա **իք** ավելացնելով (բերելիք, կարդալիք, խօսելիք) ստացվում է **անցյալի բաղադրյալ ապառնի ժամանակի երկրորդ ձևը**, որը նախադասության մեջ կարող է գործածվել գոյականաբար կամ էլ որոշիչ դառնալ.

Ես իմ ըսելիքս ըսի:

Ատիկա քու գիտնալիքդ է:

Գրելիք նամակիս բովանդակութիւնը շատ լուրջ է:

Բայի տեսակները

Արևմտահայերենում կան բայի հետևյալ հինգ տեսակները.

Ա) Էական բայ են համարվում եմ և ըլլալ բայերի իրար ամբողջացնող խոնահումները: **Եմ** – ը ունի միայն սահմանական ներկա և անկատար ժամանակները՝ ներկա՝ եմ, ես, է, անկ.անցյալ՝ էի, էիր, էր, իսկ **ըլլալ**-ը ունի խոնարհման բոլոր ձևերը և ամբողջացնում է **եմ**-ի պակասը: Այսպես, **ըլլալ** ձևից ունենում ենք՝ անորոշում՝ ըլլալ, սահմանականում՝ կ'լլամ, անկ. անցյալում՝ կ'լլայի, կատ. անցյալում՝ եղայ, հրամայականում՝ եղի՛ր, եղե՛ք, վաղակատ.՝ եղեր, հարակ.՝ եղած, ենթակ.՝ եղոյ, ապառնի՝ ըլլալիք, ըլլալու:

Ալիսը շատ աղուոր աղջիկ է (**է** = սահմ.ներկա, էական բայ):

Գրիչները գույնզգույն են (**են** = սահմ.ներկա, էական բայ):

Շատ ուրախ եղայ յաջողութիւնդ լսելով (ըլլալ օժանդակ բայ՝ կատ. անցյալ):

Ըլլալիք էր և եղաւ (ըլլալ օժանդակ բայ՝ ապառնի դերբայ +կատ. անցյալ):

Մայրս շատ ուրախ եղաւ զինք տեսնելով (ըլլալ օժանդակ բայ՝ կատ. անցյալ):

Ան արդէն բացեր էր դուռը (անցյալի վաղակատար ժամանակ):

Հիմա քնանալու ես (բաղադրյալ ապառնի ժամանակ):

Իրեն խօսած էի այս հարցի մասին (անցյալի յարակատար ժամանակ):

Այդ գաղտնիքը ինձի չէիր ըսած (անցյալի յարակատար ժամանակ, ժխտական):

Բ) ներգործական

Արևմտահայերենում ուղիղ խնդիրը միշտ դրվում է հայցական հոլովով՝ անձի պարագայում՝

Արմենը կոտրեց ապակին (հայց. հ.):

Արմենը կը սիրէ իր եղբայրը (հայց. հ.):

Որսորդը զարկաւ եղնիկ մը, նապաստակ մը և թռչուն մը:

Սակայն որոշ դեպքերում, մի քանի բայեր առնում են տրական հոլովով անուղղակի խնդիր՝

Մեր բանակը յաղթեց թշնամիներուն (տր. հ.):

Շատ սպասեցի քեզի (տր. հ.):

Գ) Կրավորական

Այս բայերը կազմվում են ներգործական բայերից երկրորդ լծորդության անորոշ դերբայի **իլ** վերջավորությունից առաջ **ու** ածանցական մասնիկը տեղավորելով, որով բայը ստանում է **ուիլ** վերջավորությունը՝ քշուիլ, բերուիլ, կազմուիլ, ընտրուիլ՝

Ուսուցիչը **կը սիրուի** աշակերտներեն:

Ուսուցիչը **կը սիրուի** աշակերտներու **կողմէ**:

Կան մի քանի կրավորական բայեր էլ, որոնք արդեն ունեն **«իլ»** վերջավորությունը՝ **այրիլ, մարիլ, ծռիլ, թափիլ, ազատիլ** և այլն, և որոնք բոլոր կրավորականների նման բացառական հոլովով անուղղակի խնդիր են առնում. օրինակ՝

Մեր տան կարասիները **հրդեհեն** այրեցան:

Պետրոսը մեծ **փորձանքե** մը ազատեր է:

Դ) Չեզոք

Այս բայերն ունեն **իլ, ալ, նալ** վերջավորությունները (ուրախանալ, խնդալ, երթալ, թոռմիլ, ծաղկիլ, փափկիլ, խուսափիլ, քնանալ, մօտենալ և այլն):

Պետրոս **կը քնանայ**:

Չեզոք սեռի բայերո անուղղակի խնդիր են ունենում՝ տրական, բացառական և գործիական հոլովներով՝

Պետրոսը հանդիպեցավ Մարկոս**ին** (տրական):

Հայկը հեռացավ իր ընտանիք**էն** (բացառական):

Ուսուցիչը կը հպարտանար իր աշակերտով (գործիական):

Ե) Պատճառական

Արևմտահայերենում կան նաև այսպիսի բայեր, որոնք միշտ պատկանում են **ել** լծորդությանը, կազմվում են ներգործական և չեզոք բայերից և կազմվում են **բայահիմք + ցնել** կադապարով՝ **մոտեցնել, խմցնել, ճանչցնել**: Ունի նաև **տալ** ձևով կազմություններ՝ **գրել տալ, բերել տալ**.

Ուսուցիչը **ղասը** վերջացուց (հայց. հոլով, ուղիղ խնդիր):

Աշոտ **սուրճ** մը բերել տուավ (հայց. հոլով, ուղիղ խնդիր):

Մայրը **քնացուց** իր զուակը:

Պօղոս լացուց իր ընկերը:

Բայի կազմությունն ըստ լծորդությունների (խոնարհումների)

Ըստ Յու. Ավետիսյանի՝ «Արևմտահայերենում բայն ունի երեք լծորդություն՝ **ա, ե, ի**: Թվով շատ քիչ բայեր ունեն նաև ու խոնարհում՝ **թողուլ, երդնուլ, զարթնուլ, զքօսնուլ** ևն, սակայն դրանցից և ոչ մեկը, այդ թվում նաև **թողուլ** բայը, չունի խոնարհման ամբողջ հարացույցը. Դրանք մնացուկային երևույթ են գրաբարից:

Արևմտահայերենում **ե** և **ի** լծորդության պատկանող մի քանի բայեր բանավոր և գրավոր խոսքում երբեմն սխալմամբ գործածվում են որպես **ա** լծորդության բայեր: Ստորև կտանք այդ բայերի կազմության ճիշտ ձևերը՝

ելլել (ոչ թե ելլալ) – կ’ելլեմ, կ’ելլենք, կ’ելլեի ...

հեծնել (ոչ թե հեծնալ) – կը հեծնեմ, կը հեծնեինք, պիտի հեծնեի ...

մտնել (ոչ թե մտնալ) – կը մտնեմ, կը մտնեինք, պիտի մտնեի ...

տեսնել (ոչ թե տեսնալ) – կը տեսնեմ, կը տեսնեինք, պիտի տեսնեի ...

իջնել (ոչ թե իջնալ) – կ’իջնեմ, կ’իջնեինք, պիտի իջնեի ...

երեւիլ (ոչ թե երեւալ, բայց երեւնալ) – կ’երեւիմ, կ’երեւեինք, պիտի երեւեի, պիտի երեւինք:

թուիլ (ոչ թե թուալ) – կը թուիմ, կը թուինք, պիտի թուեի, պիտի թուի ...

Ժպտիլ (ոչ թե ժպտալ) – կը ժպտիմ, կը ժպտեինք, պիտի ժպտեի, պիտի ժպտի¹⁷:

Սիրիայի արևմտահայերենը հետևում է նշված զուգահեռ ձևերից ճիշտ տարբերակներին, ինչպես՝

Առտուրնէ ի վեր աստիճանները ելլել իջնելէն յոգնեցայ ա՛լ:

Վայրկեան մը երեւցաւ ու առանց բան մը ըսելու ձգեց գնաց:

Աղջիկը տեսնելուն պէս մեղմ ժպտեցաւ:

¹⁷ Յու. Ս. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, ԵՊՀ, Ե., 2007, էջ 126:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՁ

Արևմտահայերենի վիճակը, անոր գոյութիւնը թե՛ գիտական, թե՛ պետական, թե՛ ալ ընկերային ուշադրութեան գլխաւոր խնդիրներէն մէկն է:

Եթէ ասկէ 50-60 տարիներ առաջ արևմտահայերենի գոյութիւնը վտանգուած չէր նկատուեր, ապա այսօր անոր ունեցած կորուստը գրեթէ անփոխարինելի է: Մեր հայրերը, անուանի եւ անանուն կրթական մշակները, հակառակ առօրեայ դժուարութիւններուն եւ կեանքի պայմաններու սղութեան, հակառակ անկախ պետութիւն մը չունենալուն, կրցան մեզի համար արդէն անիմանալի նուիրուածութեան եւ հաւատքի, անասելի եռանդի եւ անձնագոհութեան մը շնորհիւ, հայ պահել սերունդները աշխարհի տարբեր անկիւններուն մէջ: Սակայն այսօր վիճակը ուրիշ է. աւելի բարւոք պայմաններու մէջ ապրող այսօրուան հայը, անկախ պետութիւն ունեցող հայը ունի գոյութեան, նաեւ լեզուի գոյութեան արդէն տագնապալի դրութիւն մը (մօտաւորապէս 7 միլիոն արևմտահայերէն այսօր իր մայրենի լեզուն գիտցողներուն թիւը մօտաւորապէս 2 միլիոն է, եւ տակաւին ուսումնասիրութեան խնդիր է թէ այդ 2 միլիոնը որքան վարժ եւ սահուն կը գործածէ իր մայրենին):

Այս վիճակին պատճառները բազմաթիւ են եւ բազմաբնոյթ: Անոնց ընդհանուր շրջանակը կը տարծուի ամբողջ աշխարհին մէջ տեղի ունեցող էական փոփոխութիւններէ, գաղութներուն վիճակուած նոր պայմաններէ մինչեւ լեզուական եւ լեզուի դասաւանդման բարդ եւ նուրբ խնդիրներ: Ուստի արևմտահայերենի գոյութիւնը ապահովելու եւ անոր զարգացումին նպաստելու համար որդեգրուած եղանակները միակողմանի չեն կրնար ըլլալ, ըլլալու պարագային ալ արդիւնաւէտ չեն ըլլար: Արևմտահայութեան ներկայ «բարդ կառուցուածքին բարդագոյն խնդիրները կը պահանջեն բազմակողմանի, բժախնդիր ու մանրակրկիտ ուսումնասիրութիւններ, յանգելու համար ախտաճանաչումի, ապա դարմանումի»:

Այսօրուան մեր աշխարհին մէջ ինքնութեան խնդիրը զարմանալի փոփոխութիւններու կ'ենթարկուի: Համաշխարհային նոր ինքնութիւն մը ստեղծելու մարմաջը կայ, որուն մէջ տարբեր ինքնութիւններ կրնան հալիլ եւ վերանալ, ծնելով աշխարհաքաղաքացիներ, որոնց ինքնութեան ուրուագիծը դեռեւս ամբողջովին գծուած չէ եւ ելքը բոլորին համար ալ յստակ չէ: Անոնք ոչ հայ են, ոչ ֆրանսացի, ոչ արաբ, այլ... : Այսպիսի իրադրութեան մէջ բնականաբար հայերէնի կարելորութիւնը կը նուազի, որովհետեւ աշխարհաքաղաքացիին համար մեծ նշանակութիւն մը չունի ետին ձգած իր ինքնութիւնը եւ անոր արտայայտութիւնը եղող մայրենին: Ասկէ կը բխի նորահաս սերունդին անտարբերութիւնը մայրենի լեզուին հանդէպ: Համաշխարհային այս խնդիրը միայն հայերուն չի վերաբերիր, հայերը մինակ չեն հոս: Մեծ եւ պզտիկ բոլոր ազգութիւնները եւ մշակոյթները, տարբեր մակարդակներով, այս գօրաւոր հոսանքը կը դիմակալեն: Դժուարութիւնները բոլորիս ալ ծանօթ են եւ անոնց դարմանումի փորձերը կրնան հիմնուիլ նաեւ միւս երկիրներու եւ մեր նախորդներու փորձառութեան վրայ: Գաղութահայութեան անցեալ կեանքը համեմատաբար նպաստաւոր եղած է այսպիսի հզօր ալիքի մը դէմը կենալու համար, անոնք աւելի մեծ համայնքներ եւ իրարու հետ ամուր կապեր ունեցած են, ինչ որ մասնաւոր միջավայր մը ստեղծած էր, ուր հայերէնը կրցած էր առողջ սնունդ ստանալ ու աճիլ: Հոս կ'ուզեմ նշել նաեւ որ լուծումը պէտք չէ հայութիւնը դուրս ձգէ համաշխարհային ընդհանուր փոփոխութիւններու ծիրէն, բայց ան նաեւ փորձելու է իր «ես»ը չկորսնցնել այդ նորայայտ երեւոյթներուն մէջ:

Անտարբերութեան երկրորդ եւ նոյնքան կարելոր պատճառը այն սխալ, դժբախտաբար սակայն տարածուած, համոզումն է որ հայերէնը առօրեայ կեանքին մէջ գործնական արժէք մը չունի եւ կարելի է զայն երկրորդական նկատել եւ նոյնիսկ անտեսել: Օտար երկրի մէջ ապրող, ուսանող եւ աշխատող երիտասարդներուն համար թէ՛ մասնագիտական, թէ՛ նիւթական տեսանկիւններէն հայերէն գիտնալը ստիպողական պայման մը չէ, ուստի երկրորդական ջանք եւ ճիգ մը պէտք է թափէ ամէն հայ՝ իր մայրենին իրացնելու համար: Անոնք այդ ջանքին իմաստը (գործնական իմաստը, կարելորութիւնը) չեն տեսներ, այդ գործին ձեռնարկելու պատճառները չեն ըմբռներ, շահ մը չեն նկատեր հոն, ուստի եռանդով եւ փութաջանօրէն չեն մօտենար խնդիրին: Անոնց պէտք է բացատրուի, յստակ

դիմագծուի հայերենի իմացութեան տարողութիւնը, լրջութիւնը (ենթադրելով որ լեզուն հաղորդակցուելու եւ առօրեայ գործերդ կարգի դնելու համար չէ միայն): Այդ կարեւորութիւնը անոնք գիտակցելու են խորապէս, որպէսզի շխուսափին երկրորդ ճիգ մը թափելէ եւ սորվելէ լեզու մը, որ իրենց ինքնութեան հետ կ'աղերսուի ուղղակիօրէն եւ անոր ճանաչումին բարձրագոյն ձեւն է, եւ ոչ միայն գործիք մը, ինչպէս մուրճը կամ ուրիշ որեւէ բան: Արժէքին ճիշդ եւ արդիական ընկալումը, ոչ թէ հայրենասիրական հնացած կոչերը եւ ճառերը (որոնք նորերուն աւելի կը խրտչեցնեն քան կը մօտեցնեն), նոր սերունդներուն հետաքրքրութեան աճին հաստատապէս պիտի նպաստէ):

Համայնքներուն վիճակը

Հայկական համայնքները տարիներու ընթացքին զանազան փոփոխութիւններ կրած են, զանազան պատճառներով: Այդ փոփոխութիւնները մեծաւ մասամբ հայերուն ի նպաստ չեն եղած: Վերջին ցաւալի եւ մտածելու առիթ տուող դէպքերը Սուրիոյ հայկական համայնքին կը վերաբերին, որ մինչեւ վերջերս, հակառակ թիւով զիջելով Ամերիկային, Ֆրանսային, Ռուսիոյ, «մայր գաղութ» կը նկատուէր: Տագնապալի այս վիճակները, մեծ եւ անկանխատեսելի փոփոխութիւնները կ'ազդեն լեզուին եւ անոր զարգացումը կը կասեցնեն, որովհետեւ գաղութի մը հիմքերը կը խախտեն, տարիներու աշխատանքը կը քանդեն՝ անոր անդամները երկրորդ անգամ ցրուելով: Ասանկ մեծ փորձութիւններ դիմակալելը գաղութի մը կարելիութիւնները կ'անցնի բնականաբար: Հոս արդէն հարկաւոր է պետական, ինչպէս եւ արտասահմանի մէջ գործող հայկական մեծ կազմակերպութիւններու եւ կուսակցութիւններու աջակցութիւնը: Այս եւ նման փորձութիւնները, զոր օրինակ՝ տնտեսական վատթար պայմաններու պատճառով քայքայուող գաղութ մը, մտածել պէտք է տան ընդհանուր, ամբողջ հայութեանը առընչուող քաղաքականութեան մը մշակումը եւ պատուաստումը, որ նման մեծ փորձութիւններու պարագային կորուստները կարելի ըլլայ պակսեցնել: Նկատի ունիմ թէ՛ նիւթական, թէ՛ մարդկային, թէ՛ մշակութային կորուստները:

Գաղութներու երկրորդ կարեւոր խնդիրը, որ իր անմիջական ազդեցութիւնը ունի լեզուի փոխանցման եւ զարգացումին վրայ, դպրոցներուն վիճակն է: Դպրոցներու թիւին քիչ ըլլալը չէ գլխաւոր խոչընդոտը մայրենին գիտցող սերունդ մը

դաստիարակելու համար, որովհետեւ բաղդատաբար ուրիշներու, այն դիրքին լուծելիք հարց է: Էականը դպրոցներու բազմարդիւնութեան, ազդեցութեան խնդիրն է (հոս լուրջ հետազոտութեան կը կարօտի տարբեր գաղութներու հայկական դպրոցներու պատմութիւնը, բացայայտելու համար անոնց նախկին արդիւնաւորութեան հիմքերը եւ կարելիութեան պարագային անոնց որդեգրած սկզբունքներուն հետեւիլը), որ կապուած է մեր դաստիարակներուն եւ մանկավարժներուն վիճակին հետ: Վերը խօսած էի աշակերտներու անտարբերութեան մասին, որուն ենթադրելի արդիւնքը դպրոցէն առանց լեզուն սորվելու հեռանալն է: Սակայն հոս պիտի անդրադառնամ ուսուցիչներու պատրաստութեան խնդիրին, որուն դարմանումը աւելի քիչ աղերս ունի համաշխարհային փոփոխութիւններու հետ, ուստի մեզի մատչելի է անոր լուծումը, եւ բարի մտադրութիւններու ու գործնական քայլերու պարագային դարմանելի է:

Խնդիրը երկու կողմ ունի. առաջինը ճիշդ քաղաքականութիւնն է, երկրորդը՝ ուսուցիչներու արհեստավարժութեան մակարդակի բարձրացումը: Երկուքն ալ նոյնքան ստիպողական եւ նոյնքան օգտակար:

Առաջին խնդիրին էութիւնը ուսուցչական կազմի ճիշդ ընտրութիւնն է: Պարզ համեմատութիւն մը աւելի կը յստակեցնէ զայն: Գաղութներուն մեծ մասը ջարդերէն վերջ մինչեւ 60ականներ չունէին այն պայմանները, որոնք ունին հիմա: Սակայն այդ տարիներուն գործած բոլոր դպրոցները շատ աւելի արդիւնաւոր էին քան մեր հիմակուան դպրոցները: Նոր սերունդի աշակերտ մը իր ծնողքին շրջանաւարտ եղած դպրոցը յաճախելով եւ զայն աւարտելով, նոյն չափով հայերէն չի սորվիր, որքան իր հայրը կամ մայրը, հակառակ անոր որ իր նախորդները երբեմն դասարան մը անգամ չեն ունեցած, այլ սենեակ մը (տակաւին չեմ խօսիր վրաններու մասին)՝ համեմատած նորերուն ամէն ինչով ապահովուած եւ արդիական դասարաններուն: Ճիշդ ընտրութիւն ըսելով հոս արհեստավարժ մանկավարժները նկատի չունիմ, այլ իրենց գործին կարելորութիւնը գիտակցող եւ այդ պատասխանատուութիւնը կրելու ազնուութիւնը ունեցող ուսուցիչներու, որոնք նուիրուած կ'ըլլան իրենց աշակերտներուն եւ գործին: Առանց այդ ցանկութեան եւ նուիրուածութեան արհեստավարժ ըլլալը կարելի չէ (արհեստավարժութիւնը վկայականով չ'որոշուիր միայն): Մեր դպրոցներուն հին տնօրէնները ճիշդ ընտրութիւն կատարելու մեջ աւելի

հմուտ էին, քան նորերը: Ասիկա ալ մեր սորվելիք բաներէն մէկն է մեր հին դպրոցներու փորձէն:

Ուսուցիչներուն առնչուող ուրիշ խնդիր մըն ալ կայ տարածուած, որ վերոյիշեալ ձախողումին պատճառներէն մէկն է: Գրեթէ ամէն տեղ ուսուցիչի պաշտօնը երկրորդական նկատուած է երկարատեւ ի վեր թէ՛ իր նիւթական եկամուտին, թէ՛ ընկերութեան մէջ պատշաճ տեղ մը չունենալուն պատճառով (կուսակցական պոռոտախօսները, խօսքի ասպետները միշտ ալ աւելի գնահատուած են): Ասոր բնական հետեւանքը լուրջ չվերաբերիլն է այս ասպարէզին եւ երիտասարդներուն հեռու մնալն է անկէ (ինչէն կը բխի մասամբ մեր օրերուն ուսուցիչներու «սովի» խնդիրը): Երկրորդ ցաւալի արդիւնքը ոչ-պատշաճ պատրաստուածութիւն ունեցող անձանց մուտքն է ասպարէզ մը, որ լուրջ գիտելիքներ կը պահանջէ (ի վերջոյ դաստիարակութիւնը ամենանուրբ, դժուար եւ սուրբ գործերէն է աշխարհի եւ պզտիկներուն կեանքին, զարգացումին, կազմաւորումին նկատմամբ գերագոյն պատասխանատուութիւն կը պարտադրէ այդ գործով զբաղողին): Ասկէ դժուար չէ հետեւցնել արդիւնքները, որոնց վկան ենք բոլորս: Պէտք է յստակ գիտակցուի, հայութեան մէջ այն գիտակցութիւնը մշակուի, որ դպրոց մը շինելով ան իր լեզուն եւ հայութիւնը չի պահպաներ բնաւ, այլ լաւ ուսուցիչներ եւ մանկավարժներ պատրաստելով է որ կրնայ հայ եւ միտքով, հոգիով հարուստ եւ առողջ սերունդներ ունենալ: Մարդ զինք եւ իր զաւակները դաստիարակողին պէտք է առաւելագոյնս գնահատէ եւ յարգէ:

Ուսուցիչներու դերը շատ մեծ է դպրոցներուն մէջ, ուստի դպրոցի մը արգասաւոր գործունէութեան միւս բանալին պէտք է փնտռել ուսուցիչներու մասնագիտական պատրաստուածութեան, արդի մանկավարժութեան եղանակներուն քաջատեղեակութեան մէջ, ինչը մեր դպրոցներուն գրեթէ ամէն տեղ կը պակսի: Վերջին տասնամեակներուն մանկավարժութեան ասպարէզէն ներս եղած «յեղափոխութիւնները» զարմանալիօրէն կը վրիպին մեր մանկավարժներուն տեսողութենէն: Պէտք է ծանօթանալ եւ չլճանալ, հին եւ մաշած եղանակներով չճանրաբեռնել սեփական անձը եւ կարենալ աշակերտներուն հետաքրքրութիւնը արթնցնել: Հետեւիլ նորութիւններուն ոչ ի սեր նորութեան, այլ որովհետեւ անոնք երկարատեւ ուսումնասիրութիւններու արդիւնք են եւ փորձով ապացուցած են իրենց

կենսունակությիւնը: Հոս կ'ուզեմ յիշել Յարութիւն Քիրքճեանի մատնանշած թակարդները որպէս օրինակ, որոնցմէ ուսուցիչը ամէն գնով խուսափելու է.

- Առաջին խուսափելին ակադեմական բրածոյ դասաւանդումն է, պատանի հոգիներու առջեւ նետուած լեզուագիտական–լեզուաբանական չոր գիտելիքը. կամ գրականութեան պարագային՝ նոյնքան չոր գրապատմութիւնն ու գրականագիտութիւնը:

- Ապա՝ երկրորդ սխալ՝ հայերէնի եւ հայ գրականութեան «սիրողական» ուսուցումը, որ ընդհանրապէս դասը կը վերածէ գրական պատահական հատուածներու վրայ պատահական եւ կցկտուր «գրոյց»ի մը:

Մասնագիտօրէն լաւ պատրաստուած ուսուցիչը ուսուցումի վերոյիշեալ եղանակները պէտք է զանցէ եւ զանոնք փոխարինէ. «Աշակերտակեդրոն մօտեցումով, այսինքն՝ հիմնուած մանուկ–պատանիի հոգեբանութեան փորձնական ճանաչումին եւ շահագրգռութիւններուն վրայ»:

Այս բոլորէն կը բխի հայկական համայնքներու գործող դպրոցներուն մէջ մասնագէտ ուսուցիչներու պատրաստութեան բնական խնդիրը, որուն լուծումը միշտ ալ կարելի է, լուրջ միտումի ներկայութեան պարագային:

Յաջորդ եւ նոյնքան կարեւոր խնդիրը դասագիրքերուն կը վերաբերի: Հակառակ նեղրուած ջանքերուն եւ միշտ այժմեական եղող նիւթին, հայկական դպրոցները մինչեւ հիմա չունին պատշաճ դասագիրքեր եւ կը շարունակեն դասաւանդել ոչ-մասնագիտական եւ դպրոցականներուն համար քիչ հետաքրքիր դասագիրքերով (հոս կան բացառութիւններ, օրինակ՝ Քիրքճեանին կարգ մը դասագիրքերը կամ 50-ականներուն արտասահմանի եւ Հայաստանի մասնագէտներու ջանքերով պատրաստուած «Մայրենի Լեզու», «Հայ Գրականութիւն» դասագիրքերը, որովհետեւ խնդիրս ընդհանուր պատկերին մասին խօսիլն է, գերակշռող մասը ներկայացնելը: Նոյնն էր պարագան ուսուցիչներու մասին ըսածներուս, վերջի վերջոյ եթէ առհասարակ լաւ ուսուցիչներ չըլլային, ոչ ոք հայերէն պիտի խօսէր այսօր, ներառեալ ես): Ասոր մասին Քիրքճեան կ'ըսէ. «Միւս կողմէ, մայրենի լեզուի ուսուցման մեր պատկերացումը պատահական ուսուցում մըն է – մեթոտի բացակայութիւն: Ատիկա կ'երեւի հայերէնի աւանդական դասագիրքերուն մէջ, որոնք գրեթէ միշտ գրական հատուածներու պարզ ծաղկաքաղներ են եղած,

կամ՝ հազի ատկէ աւելին»: Բնականաբար հարկ է մեծ հմտութիւն, փորձառութիւն եւ մասնագիտական խորհուրդ՝ լաւ եւ արդիական դասագիրքեր պատրաստելու համար: Արեւմտահայերէնը դասագիրքերու տեսակէտէն ուրիշ դժուարութիւններ ալ ունի՝ սփռուածութիւնը, տարբեր մշակոյթներու մէջ ապրելու իրողութիւնը, լեզուին տիրապետելու ամենատարբեր մակարդակները:

Խնդիրը բարդ է եւ միասնական, նոյնիսկ գերազանցապէս օրինակելի դասագիրք մը ստեղծելով չի լմննար: Եթէ այս գործին նուիրուած լեզուաբաններուն նպատակը արեւմտահայերէնի պահպանութիւնն է, ապա անոնք պէտք է ստեղծեն հայերէնի ուսուցման ձեռնարկներ նկատի ունենալով արտասահմանի հայութեան թե՛ հայախօս (այսինքն՝ որպէս մայրենի լեզու), թե՛ օտարախօս (այսինքն՝ հայերէնը որպէս երկրորդ լեզու) հատուածները միաժամանակ: Ատկէ գատ՝ պէտք է դիմագրաւեն եղած դպրոցներուն տարբերութիւնները՝ ամենօրեայ, երկօրեայ, կիրակնօրեայ: Լեզուաբաններու խումբը նկատի ունենալու է նաեւ եղած տարբերութիւնները երկրէ երկիր, շրջանէ շրջան: Այս բոլորը նկատի ունենալով Գեորգ Պարտաքճեան հետեւեալը կ'առաջարկէ. «Հասկնալի պատճառներով, այս դասագիրքը պէտք է պատրաստուի ի ծնէ Արեւմտահայերէն խօսող գիտնական-մասնագէտներու կողմէ: Նկատի ունենալով Սփիւռքի բազմազանութիւնը և հիւրընկալ երկիրներու այլալեզու մշակոյթները՝ կարելի չէ տառացիօրէն «միասնական» դասագիրք ստեղծել: Մակայն կարելի է ընդհանուր «մայր» դասագիրք մը ստեղծել միասնական ֆորմատով»:

Նման դասագիրքեր պատրաստելու ատեն նկատի պէտք է ունենանք նաեւ ուրիշ երկիրներու տասնամեակներու փորձը, որուն մասին խօսած է Պետրոս Պետիրեան. «Աշխարհիս երեսին կան երկիրներ, անցեալին գաղութակալ երկիրներ, որոնք, ստիպողաբար, իրենց լեզուն իբր երկրորդ լեզու ուսուցանելու արդէն առաւել քան 200 տարիներու փորձառութիւնն ունին: Հոս կ'երեւի թէ ամենէն նշանաւորը Անգլիան է, իր լեզուով: Ան շատոնց ի վեր հրապարակի վրայ դրած և դասագիրքերու, այլ հրատարակութիւններու ձեւով գործնականօրէն կիրարկած է անգլերէնը իբր այդպիսի լեզու ուսուցանելու մեթոտաբանութիւնը՝ English for Indians, եւայլն»:

Ինչպէս ուսուցիչներու խնդիրը, դասագիրքի մը կամ դասագիրքերու պատրաստութեան խնդիրն ալ մեր կարողութիւններուն ծիրը չ'անցնիր, որուն

իրագործումը կը կարօտի կամքի եւ արտերկրի ու հայրենի մասնագէտներու համախմբուած աշխատանքին:

Արեւմտահայերէնի ամէնէն լուրջ վերջին խնդիրը անոր զարգացումին հարցն է: Դպրոցները, դասագիրքերը, ուսուցիչները լեզուի պահպանումին աւելի մեծ նշանակութիւն կու տան, անոր պահապան եւ նուիրուած զինուորներն են, քան զարգացումը ապահովողները: Սակայն միայն պահելը իր իմաստը կը կորսնցնէ, եթէ լեզուն զարգանալու կարելիութիւն չունի: Կարելի է նաեւ ըսել, որ լեզուն կենդանի պահելու կարելորագոյն եղանակը, այդ լեզուով խօսելէն զատ եւ անոր հաւասար, այդ լեզուի զարգացումը երաշխաւորելն է: Ասոնք սերտօրէն կապուած են իրարու եւ զանոնք բաժնելը կասկածելի է: Արեւմտահայերէնը այս տեսակէտէն ալ շատ բախտաւոր չէ: Օտար գրականութիւններէ եղած թարգմանութիւններ գրեթէ չկան, որ լեզուն հարստացնելու էական ձեւերէն է, ինչ որ մինչեւ 70ականներ աւելի յաճախ տեղի ունեցող իրողութիւն էր: Արեւմտահայերէն թերթերու եւ ամսագիրներու թիւը երթալէն կը նուազի (մինչեւ 80ականներ միայն Սուրիոյ եւ Լիբանանի մէջ տպագրուող մամուլի թիւը 200-ը կ'անցնէր, իսկ հիմա 100-ի չի հասնիր), իսկ քիչ նորերուն մէջ գործածուող արեւմտահայերէնը իր մակարդակով կը զիջի նախորդ ժամանակներու արեւմտահայերէնին: Թերթերուն եւ ամսագիրներուն համար լաւ հայագէտներ պէտք է պատրաստել, իսկ հայագիտական կեդրոններ կան եւ կը գործեն տարբեր երկիրներու մէջ, ուստի իրագործելի խնդիր մըն է այս մէկը: Օտար լեզուներ գիտցող մեծ թիւով հայեր կան, որոնց պէտք է քաջալերել տարբեր ձեւերով, որ կատարեն թարգմանութիւններ: Մեր հայկական հաստատութիւնները ասանկ գործեր քաջալերելու բոլոր կարելիութիւնները ունին: Նոյնիսկ կարելի է Հայաստանի թարգմանիչներուն հետ միասնական ծրագիր կազմել եւ թարգմանել այն, ինչ արեւելահայերէն չէ թարգմանուած, որովհետեւ այդ երկու լեզուները միասնական արմատ ունին եւ մէկուն միւսին ամբողջացնելը շատ աւելի բնական եւ տրամաբանական է, քան նոյն գործը երկու անգամ ընելը:

Մտահոգութիւնները շատ են, սակայն անլուծելի չեն: Եթէ Մեծ Եղեռնին յաջորդած տարիներուն մեր մտաւորականները կրցան ամբողջ հայութեան սորվեցնել իրենց մայրենին (յիշենք որ շատերը հայերէն չէին գիտեր), ուրեմն հիմա ալ կարելիութիւնը կայ նոր թափով սկսելու դադար չունեցող այս գործը: Պարզապէս

պէտք է աւելի յստակ ըլլալ ու միասնական եւ աշխատիլ որ մեր խօսքերուն եւ գործերուն մէջ անդունդ մը չըլլայ:

Օգտագործված գրականություն

Արեղյան Մ., Երկեր, հ. 2, Ե., 1974:

Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Զանգակ - 97, Ե., 2011:

Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, ԵՊՀ, Ե., 2007 :

Բաղդիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000:

Բեդիրյան Պ., Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության, Երևան, 2007:

Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:

Դոկտ. Հիլտա Գալֆայեան - Փանոսեան, Արևմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ, Ե., 2009, ԵՊՀ:

ՀՄՀ, հ. 1, Ե., 1974:

ՀՄՀ, հ. 10, Ե., 1984:

ՀՄՀ, հ. 2, Ե., 1976:

Մկրտիչեան Մ., Քերականութեան դասեր, Բ գիրք, տպ. Արևելք, Հալէպ, 1962:

Մվսես Խորենացի, Պատմություն հայոց, Ե., 1968:

Պետիրեան Պ., Եկեք ճիշդ խօսինք ու գրենք, Օժանդակ ձեռնարկ, Պոստոն, Մես. , Պայքար, 1993:

Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Արեվիկ, Ե., 1991:

Սաքայան Դորա, Western Armenian for English-speaking World, Mountreal, 2000:

Սաքապետոյան Ռ., Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Տիգրան Մեծ, Ե., 2011:

Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006:

Սուքիասյան Ա. Մ., Ս. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:

Տեր-Մերկերյան Ռոբեր, Արդի հայերենի երկու տարբերակների
փոխներգործության շրջանակները, Պատմաբանասիրական հանդես, Ե., 2001, N 1:



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սալյաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am